


9068



N^o 37

Ծնորեալսարք պահպան-ի և կայտանութեան
ընթացի բարեւունքն 1891թ-ի Հունիսի 21-ին յաջ
Տաճ կայտանութեան ու առաջի ազգայի կայտանութեան
ընթացի բարեւունքն ու առաջի ազգայի կայտանութեան

6ին-Հ. 1894.

Աղյուսակ Երկարութեան

891.99.2
E-865
W.

710014


Ազերական երիտեսն

ՍԻԱԼ ՀԱՇԻՒ

1001/88

✓

ԿՕՄԵԴԻԱ ՉՈՐԴ ՊՈԽԹԻՒՆԻՎ



ТИФЛИСЪ.

Типография И. МАРТИРОСЯНА, Орбелиановская улица д. № 1—2.

1892

2253

Настоящая комедия подъ назв. „Ошибочный расчетъ“ разрѣшена Г. Главноначальствующимъ Граж. частью на Кавказѣ на основ. 84 ст. Уст. Ценз., изд. 1890 г. къ представлению на сцѣнахъ края. Декабря 12 дня 1891 г. Тифлисъ.

Предсѣдатель комитета *M. Гаккелъ.*

Секретарь *Меликъ-Нубаровъ.*

2003

Дозволено Цензурою Тифлисъ, 29-го ноября 1891 г.

2681

«ՍԻ Ա. Լ. Հ Ա. Շ Ի Խ» կօմեդ.



Ազգի Մերութ (Պ. ԹՈՒՐԵԱՆ). «— Բան մը չը հասկցայ,
հա, չէ, չէ, հա....» (գործ Ա. երե. III).

ԴԱՐՅԱՆԻ ԱՆՁԻՆԵ

ՍՈԼՅԵՐԻ ՍՏԵՓԱՆԻՉ ՀԵՔԻՄԵԱՆ, բժիշկ, մօտ 55
տարեկան:

ԱՆՆԱ ԳԱՎՐԵԼՈՎՆԱՅՑ, սորա կինը, մօտ 38 տարեկան,
բայց ցանկանում է առելի ջահի երեալ:

ՆԻԿՈԼԱՅ ԻԽԱՆԻՉ ԱԱԽՈՐՈՒՄԵԱՆ, բժիշկ, մօտ 28
տարեկան, պիտոն դէմքով:

ԵԼԻՆԱ ՊՐԱՎՈՎՆԱՅՑ (Հեղինէ), սորա կինը, 22 տարեկան, գեղեցիկ:

ՀԱՅՐԵՆԻՑ ԱՐԻՒԹԻՉ ՄԱՀՏԵՍԵԱՆ, երրման ջնով-
նիկ Խնամնդաւուովովիք, մօտ 58 տարեկան:

ԶԱՐԼՈՅԱՑ ՍԵՎԵԼԵՒ Ա.Հ. (Զարսկաթ խանում), սորա
կինը, մօտ 45 տարեկան:

ՄԻՔԵՆԱՆ ՄՊՈՅ, չրբման զինորական սպազ, մօտ
65 տարեկան, պատուառ քաղաքացի և հոգաբարձու-
տեղական գովրոցի:

ՄԻԱՆԱՐԴԻՆԱՆ, մօտ 30 տարեկան,
ԱՅՆ ՄՈԱՍԵԱՆ { տեղացի առևտրականք:
ԳԱՐԵՎՈՅՏԵԱՆ {

ՄԻՔԻՄ, աղախին Նախարարեանի, 18 տարեկան:
ՄԵՐՈՒ, խոհարար (աշխ) Ա.քիմեանի, մօտ 50 տա-
րեկան:

ՄԱԹՈՅ, նոռաչ Միջնորդեանի, 35 տարեկան:

Անցրը պատում է գարնանը՝ զաւառական մի հայարնակ
քաղաքում:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍՈԼՈՄՈՆ ՍՏԵՓԱՆԻՉ ՀԵՔԻՄԵՍՆ, բժիշկ, մօտ 55
տարեկան:

ԱՆՆԱ ԳԱՎՐԻԼՈՎՆԱՅ, սորա կինը, մօտ 38 տարե-
կան, բաց ցանկանում է աւելի ջահիլ երևալ,

ՆԻԿՈԼԱՅ ԻՒԱՆԻՉ ՆԱԽՆԲՇԵՍՆ, բժիշկ, մօտ 28
տարեկան, սիրուն դէմքով:


ԵԼԻՆԱ ԳԱՎԻԼՈՎՆԱՅ (Հեղինէ), սորա կինը, 22 տա-
րեկան, գեղեցիկ:

ՀԱՅՐԱՊԵՏ ԱՐԻՒԹԻՉ ՄԱՀՏԵՍԵՍՆ, երբեմն ջինով-
նիկ Խնտենդանստվոյի, մօտ 58 տարեկան:

ԶԱՐԼՈՏԱՅ ՍԵՎԻԼԻՎՆԱՅ (Զողակաթ խանում), սորա
կինը, մօտ 45 տարեկան:

ՄԻՐԵԿԱՆ ԱՂԱՅ, երբեմն զինւորական սպայ, մօտ
65 տարեկան, պատուաւոր քաղաքացի և հոգաբարձու-
տեղական դպրոցի:

ՄԻՋՆՈՐԴԻԵՍՆ, մօտ 30 տարեկան:

ՍԵՎԱՄՈՍԵԱՆ  ՊԱՐՁԱՄՏՏԵՍՆ, { տեղացի առևտրականք:

ՄԱՐԻԱՄ, աղախին Նախարարեանի, 18 տարեկան:

ՍԵՐՈԲ, խոհարար (աշխի) ՀԵքիմեանի, մօտ 50 տա-
րեկան:

ՄԱԹՈՍ, ծառայ Միջնորդեանի. 35 տարեկան:

Անցրը պատահում է գարնանը՝ գաւառական մի հայաբնակ
քաղաքում:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

ՔԺԽԸԼ ՀԵՔԻՄԵԱՆԻ ԸՆԴՈւՆԵԼՈՒԹԵԱՆ ՍԵՆԵԱԿԲ պատշաճաւոր
կահկարասիքով, երեք դուռն՝ աջ, ձախ և մէջ տեղը:

ԵՐԵՒՈՅԹ I.

ԲԺԻՃԿ ՀԵՔԻՄԵԱՆ և ՄԻՋՆՈՐԴԵԱՆ

ՀԵՔԻՄԵԱՆ. (ՀԵՔԻՄԵԱՆ ՅԵԿԱՅԻՆ Բարկայած) Ձէ, մի
ասացեք ինդրեմ ինչ է ձեր Նախարարեանը, որ
ամէնքդ էլ գլխին պտոյս էք կալիս:

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ. Նախարարեանը թէ պատուա-
կան երիտասարդ է և թէ քաջ բժիշկ:

ՀԵՔԻՄ. (ՊԱՏԱՆԱԼԵԿԱԾ) Ոչ թէ քաջ բժիշկ
է, այլ մի շարլատան, որ իւր օյինբազութիւնով
ամենքի աչքը շլացնում է: Դուք շատ բաներ էք
հասկանում....: Թիֆլիսից բերած կահկարասիքով
լքցրել է տունը, սեղանը զարդարել է պատկերա-
գարդ գրքերով... ու դուք իսկոյն կարծեցիք թէ
երկնքից է ցած իջել: Ոչ ոք չէ ուզում հասկանալ,
որ այդ բոլորը միամիտների աչքերում թող փշելու

Համար է: Իմ այցելութեանց համար, օրինակ, 20
հատ ձու կամ մի ջուխտ վառեկ են ուղարկում,
շատ շատ ձեռս են դնում մի փտած ուուրլիանոց,
իսկ նա եկաւ չեկաւ տարածեց որ երեք ուուրլուց
պակաս չէ ընդունում...:

ՄԻՋՆԱՐԴԵԱՆ (ՇՈՒԴՅԱԿԵՂՈՎ) Բայց չունեռ-
ներին նա ձրի է բժշկում:

ՀիմիՄ. Այդ էլ աչքակապութիւն է, ուրիշ սխնչ:
Ես միթէ քիչ եմ ձրի բժշկել: 25 տարի է բժշկու-
թիւն եմ անում, 12 տարի է այս քաղաքումն եմ—
միշտ ամենքը գոհ են եղել ինձանից: Դա եկաւ թէ
չէ, ամենքն էլ դէպի դորան վազեցին. այդ ինչ կը
նշանակէ...

Միջնորդեան Նախարարեանը ինքը մեղաւոր չէ այդ բանում։ Միթէ ձեզ յայտնի չէ, որ ամեն նոր բան գրավիչ է……

ՀԵԲԻՄ. Գրաւիչ է, հաւ, լաւ լինի, թէ
վատ լինի—միայն թէ նորութիւն լինի: Այդ է ձեր
հասարակութեան գատողութիւնը: Աւելի լաւ չի լի-
նիլ՝ ուղիղը խոստովանիք, որ ձեր նախարարեանը
սիրուն ռեխի տէր է և կանանցը հաճելի: Նաշալ-
նիկի կնոջը ելեքտրականութիւնով է բժշկում, միւսի
տիկնոջը հիպնոտիզմն է անում: Քնեցնում, զարթա-
ցնում... սատանան գիտէ ինչ խաղեր է խաղում:
Եղբայր, հազիւ մի ամիս կայ որ եկել է, այստեղի բո-
լոր տիկնանց էլ խելքից հանեց, ամէնքն էլ սկսել
են հիմայ հիւանդ ձեւանալ, կասես մեր քաղաքում

զանկարծ մի վարակիչ ցաւ կամ մահտարաժամ է ընկել:

ՄԻԱՆԱՌԻԵՍՆ. Գարձեալ կասեմ՝ Կախարարեանը
մեղաւոր չէ, եթէ մեր տիկնայք յափշտակուող բնու-
թիւն ունին:

ՀԵՖԻՄ. Կա մեղ չունէ. ապա ի՞ս եմ մեղաւորը: Այդպէս չէ կարելի, դուք նորան շինել էք մի կրուք և պաշտում: Ում բերանից ասես լսվում է՝ Կախարարեան, հայ Կախարարեան...:

ԵՐԵՒԱՆՑ Բ

ՆՈՅՆՔ և ՏԻԿԻՆ ՀԵՔԻՄԵԱՆ

Տիկ. Հեթիվը Ան. (Գլւարէալ Ֆջէն Շահէրէն) Դարձ-
ձեալ Նախարարեան... (Միջնորդեանին) Բարեւ ձեզ:
(Գլւարէն Հանէլով) Ականչներս խացան այդ մարդու
անունը շատ լսելուց: Այսօր երեք չորս տեղ էի, ուր
գնացի՝ բոլորն էլ բան ու գործ էին շինել Նախա-
րարեանին: Կիւրակէ իրիկուն փոչմէյտրինց տանը
արժանացայ ամբողջ երկու ժամ հետը խօսելու, բայց
ես նորա մէջ մի առանձին բան չտեսալի: Չգիտեմ
ինչիցն են հիանում: Խոկ նորա կնիկը.... մի կոտրտ-
վում է, մի փքվում է, կասես գետնի վրայ չինի մանգա-
լս: Ուզում է ցոյց տալ, որ արխտուրատկալ է և իւր
հատն ու կտորը չկայ....: Ամբողջ զիշերը հեռուից կա-
տուի աչքերավ դիտում էր, թէ ինչպէս իւր մարդը
խօսումէր ինձ հետ: Բարկութիւնից գջլտեց իւր թևի
բրասէտը....:

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ. Նա թէ և պարզ, բայց շատ
ճաշակով է հագնվում, այնպէս չէ, տիկին...:

Տիկ. ՀԵՔԻՄ. Ո՞վ ասաց. Նա է ճաշակով
հագնվում: Ճատ բան են հասկանում ձեր քաղաքում,
(Ժաշելով) «ճաշակով հագնվում», հա, հա, հա...:
Խնդրեմ ճաշակի բանը ինձ ոչ ոք չը սովորցնէ: Տի-
կին նախարարեանը որ ինչ կուզէ հագնէ՝ զէլ էն
կիկօն է, զէլ էն կիկօն...»

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ Դուք խիստ էք, տիկին. շատե-
րի ասելով՝ նա հրապուրիչ սիրուն է...:

Տիկ. ՀԵՔԻՄ. Սիրուն, հա, հա, հա: «Սի-
րուն». Ինչպէս չէ, հա, հա, հա:

ՀԵՔԻՄԵԱՆ. Թողէք, խնդրեմ, այդ տեսակ խօ-
սակցութիւնը:

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ. Բանը, իհարկ է, սիրունութիւնը
չէ: Ամուսնական երջանկութեան համար հարկաւոր
է նմանապէս որ բնութեամբ համապատասխան լի-
նին միմեանց...»:

Տիկ. ՀԵՔԻՄ. Ահա այդ էլ չկայ: Այդպիսի
կնոջ որ մարդը կը գիմանայ: Ի՞նչ անենք թէ հա-
րուստ ընտանիքի աղջիկ է և 20 հազար էլ փող է
բերել...: Հախն է ձեր գոված նախարարեանին. թէ
ինչ է—փող, լաւ ազգականներ, անուն—գնացել է
ու խրուել է:

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ. Նախարարեանը անբաւական չէ
իւր դրութիւնից...:

Տիկ. ՀԵՔԻՄ. Ո՞դ միայն դուք էք ասում:

ԵՐԵՒԱՅԹ III.

ՆՈՅՆՔ և ՍԵՐՈԲԸ

ՍԵՐՈԲԸ (ՀԵՂՊՈՊ ԳՐԴԱԿԱՆ, ՊԵՂ ՀԱՅ-
ԱՆՁ, ՏԵՂ ԱՐԵՎԵԼԱՆ) Փայթօնչի Մկօն վարն է, Եկեր է,
կըսէ, մախսուս բարե կենես, Հարցընես կը թը աղադ
ու խանումդ տանն են, որ զամ...:

Տիկ. ՀԵՔԻՄ. Ո՞վ է մախսուս բարե անողը:
ՍԵՐՈԲԸ. Կըսէ ան թաղեալ դօխտուրն է:

ՀԵՔԻՄ. Դարձեալ նախարարեան. Աստուած
իմ: (ՍԵՐԸՆ) Ասա տանը չեն, չեն, չեն:

Տիկ. ՀԵՔԻՄ (ամուսնուն) Սպասիր: (ՍԵՐԸՆ) Դու
ինչ պատասխանեցիր:

ՍԵՐՈԲԸ. Տանը կեղնին, բա ուր կէղնին, ըսի:
Ազաս չորս օր է տունէն չէ գուրս ելած—բռնտան
կը ցանէ. Խանումս օրը քսան հետ կերդայ, կուգայ...:

ՀԵՔԻՄԵԱՆ. Գնա, ասա տանը չեն:

Տիկ. ՀԵՔԻՄ. Այդպէս չի կարելի: Գնա, ասա
տանն են, հրամայեցէք:

ՀԵՔԻՄԵԱՆ. Ես նրան չեմ կարող ընդունել, չեմ
դիմանալ, չեմ կարող տեսնել...:

Տիկ. ՀԵՔԻՄ. Մի մսածիր թէ ինչ ես անում. չէ
որ նա կը հասկանայ... անկարելի է ընդունել:
(ՍԵՐԸՆ) Գնա, ասա հրամայեցէք, շատ ուրախ կը
լինենք...:

ՍԵՐՈԲԸ Ըսեմ գայ,...

Տիկ. ՀԵՔԻՄ. Հա...:

ՀԵՔԻՄԵԱՆ. 2է.

ՍԵՐՈԲ. Է՞ս, շիտակն ըսէք՝ հա՞, չէ...
ՀԵՔԻՄԵԱՆ. 2է.

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Հա...
ՍԵՐՈԲ. Բան մը չը հասկցայ՝ «Հա, չէ, չէ, հա»

(բառերը հշշ են իրան) մենք ալ կերդանք Մկօլին
կսենք քի՝ «Հա, չէ», կընեն, հեմայ մտքերնին «Հա»
է, հրամէցէք (գոռո՞ւ է):

ՀԵՔԻՄԵԱՆ. 2է ամազում, հեմայ էլ դօքտոր է
իրան կոչում, որ դիպոմով, չէ՞ որ նա էլ ինձ նման
մի լեկար է:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Հանդարտուիր, ինդրեմ, փոքր
ինչ զսպէ քեզ:

ՀԵՔԻՄԵԱՆ. Ինչ կուղես արձ, իսկ ես նորան
տեսնել չեմ կարող. ես կերդամ բաղչաս:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ճատ էլ լաւ կանես: Ընցեալ
գիշեր փոչմէյստրինց տանը դու այնքան կոպիտ
վարուեցիր հետը, որ ես քոյ տեղ ամաչեցի:

ՀԵՔԻՄԵԱՆ. Գիտես ինչ, զոնէ դու ինձ հան-
գիստ թող. թու (լուսելով որուր է գոռո՞ւ յա՞լ դա՞ներից):

ՄԻՋՆՈՐԴԻԵԱՆ. Հակառակ ձեր ամուսնու վար-
մունքին, դուք, տիկին, այն գիշերը շատ գեղեցիկ
տպաւորութիւն էք թողել, մանաւանդ նախարար-
եանի վրայ...:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Միթէ, հա, հա, հա...

ՄԻՋՆՈՐԴԻԵԱՆ. Այս, զոնէ նա հրամանքով էր
պատմում ձեր մասին...:

ԵՐԵՒԱՅԹ IV,

ՏԻԿԻՆ ՀԵՔԻՄԵԱՆ, ՄԻՋՆՈՐԴԻԵԱՆ և ՆԱԽԱՐԱՐԵԱՆ.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. (Եջեն դաշից, կորը գուշե տալով)

Աննա Գավրիլօվնայ...:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ճատ ուրախ եմ, (առանց աե-
շոյ վեր հենալու մեհուս է յետու) ինդրեմ հրամայեցէք
(յոյ առաջ բաղշանութեան վրայ):

ՆԱԽԱՐԱՐ. (Միջնորդակին մուրանու յետու ապաշխախ) Բարե
ձեզ. (աեհաջը) Ձեր ամուսինը...:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Նա... նա գնաց հիւանդների
այցելութեան...:

ՆԱԽԱՐԱՐ. Ճատ ցաւում եմ, որ բազդ չու-
նեցայ դօքտորին տանը գտնելու. յոյս ունիմ, որ
Սօլօմօն Ստեփանիչը ինձ, որպէս նոր մարդու, չի
զրկիլ իւր օգնութիւնից և միշտ կը ղեկաւարէ ինձ
իւր բարի խորհուրդներով:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Յաջող էր բժշկում... մինչև
հեմայ ամէնքն էլ բաւական էին ամուսնուցու...
Բայց ձեր զիտութիւնը, իհարկ է, այնքան թարմ է
և ընդարձակ, որ հազիւ թէ ամուսինս կարողանայ
ձեզ օգտաւէտ գտնուիլ: Մինք այստեղ, գիտէք, ա-
մեն բանում յետ ենք մնացել. միշտ օրական մանր
շահերի ետևից ենք...: Կատարեալ գաւառացի ենք
դարձել...:

ՆԱԽԱՐԱՐ. Թողլ տուէք, տիկին, շնամաձայ-

նիլ ձեղ հետ։ Ախալվում են, որոնք կարծում են թէ գաւառը մի սարսափելի բան է։ Ես քանի որ հետդետէ ընդարձակում եմ իմ ծանօթութիւններս, այնքան օրէցօր ընտելանում եմ գաւառական կեանքի հետ և հաշտվում։ Անցեալ օրը, օրինակի համար, փոչմէստրի տանը եղած ընկերութիւնը շատ ընտիր էր և այն երեկոյն, գլխաւորապէս, իհարկէ, ձեր ներկայութեան շնորհիւ, ինձ վրայ շատ քաղցր տպաւորութիւն թողեց։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ուրեմն դուք բաւական էք այստեղի կեանքից։

ՆԱԽԱՐ. Իմ բաւականութիւնս կատարեալ կինէր նա մանաւանդ, երբ այսպիսի ընտիր հասարակութեան ձեղ պէս մի պատուական ներկայացուցիչը ինձ հովանաւոր լինէր……

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Դուք շատ բարի էք……

ՆԱԽԱՐ. Ես այն գիշերը բոլորովին համոզուեցի, որ դուք, տիկին, թագուհու պէս տիրապետում էիք ամէնքի վրայ, որ, իրաւ, ձեղ է պատկանում առաջին տեղը……

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Թող այսուհետեւ առաջնակարգ գեր խաղացողները ուրիշները լինին, ինձ փոյթ է։

ՆԱԽԱՐ. Ես տեսայ թէ ինչպէս ամենքին դուք ոգևորում էիք և կենդանացնում։ Բոլոր տղամարդիքը ձեր գլխին էին պտուտ գալիս……

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Այն, ես միշտ նախադասում եմ

տղամարդկանց ընկերութիւնը. իսկ կանանց ընկերութիւնը, ճշմարիտն ասեմ, չեմ սիրում։

ՆԱԽԱՐ. Ի՞նչ պատճառաւ.

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Այն պատճառաւ, որ ես ինքը իբրև կին՝ իմ մէջ բոլվանդակում եմ կանանցի բոլոր պակասութիւնները։

ՆԱԽԱՐ. Ձեզ պէս տիկնալքը, զիտէք, նա մանաւանդ հրապուրիչ են մեղ համար։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Այս……

ՆԱԽԱՐ. Անկասկած։ Բայց, ասացէք խընգրեմ, որո՞նք են այդ պակասութիւնները։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ճատ, շատ. թիւ չկայ։ Միայն այս էլ պիտի ասեմ, որ ես երբէք չեմ սեփէականացնում ինձ այնպիսի արժանաւորութիւններ, որոնցից խսկապէս ես զուրկ եմ։ Թողնենք այդ։ Ձեր տիկինը կարծեմ, այնքան հաճութիւն չը զգաց այն գիշերը, որքան դուք։

ՆԱԽԱՐ. Նա… նա այն գիշերը փոքր ինչ տկար էր։ Ճատ կ'ցաւինք եթէ այդ բանը ծուռը մեկնուի։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ո՞չ։ Բայց նա առհասարակ մեր մէջը ջոկվում է։ Իսկոյն երեսում է, որ Ելենայ Պաւոլնան բարձր շրջանների մէջ է ասպրած և կրթուած։ Պժբաղդարար նա այստեղ իւրեան յարմար հասարակութիւն չունէ և ես վախում եմ, որ շուտով պիտի ձանձրանալ……

ՆԱԽԱՐ. Ամենելին։ Նա կաշխատէ ոչն-

չացնել իւր մասին եղած ալդպիսի կարծիքը և, յոյս ունիմ, կարժանանայ հասարակութեան՝ սիրոյն և համակրութեանը. (վէրինուշտ) խնդրեմ իմ յարդանքս մատուցէք դօքտորին: Պատվւ ունիմ (Տէ՛. Հէտ-թառը տէշեց չք վէր հնարջ չէ առը թէնում է): Յ'տեսութիւն պ. Միջնորդեան, մեզ մի մոռանաք և շուտ շուտ այցելէցէք:

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ. (չէտու առաջ) Մեծ ուրախութեամբ (Նախարարեանը դուրս է գնում):

ԵՐԵՒԱՅԹ Վ.

ՏԻԿ. ՀԵՔԻՄԵԱՆ և ՄԻՋՆՈՐԴԵԱՆ

ՏԻԿ. ՀԵՔԻՄԵԱՆ. Տեսաք, ինչպէս ընդունեցի:

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ. Իմ կարծիքով լաւ չարեցիք, մանաւանդ որ ձեր ամուսինը ոչ էլ ուզեց տեսնել նրան ու գնաց բաղչան:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Իսկ ես ինչու լաւ չարեցի:

ՄԻՋՆՈՐԴ. Որովհետեւ նա մեղաւոր չէ, եթէ հիւանդները ցանկանում են նորա ձեռքով բժշկուիլ: Ուրիշ բան է, եթէ Նախարարեանը ձեր ամուսնոյ դէմ որոգալթներ լինէր լարում. բայց հաւատացէք, նա այնքան աղնիւ է և այնպիսի յարգանքով է վերաբերվում դէպի ձեզ, որ ստոր միջոցների երբէք չի դիմիլ:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Դուք միշտ պաշտպանում էք ձեր Նախարարեանին:

ՄԻՋՆՈՐԴ. Նա ամենելին կարօտ չէ իմ պաշտպանութեանը: Ես ցաւում եմ միայն, որ առանց պատճառի ձեր մէջ անբաւականութիւններ են ըսկում և դուք ձեր մի շարք կծու ակնարկութիւններովք գրեթէ վիրաւորեցիք նորան: Յ'տեսութիւն տիկին (չէտու առաջ դուրս է գնում միջին դունից):

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. (Բէնուշ). Ասում է «վիրաւորեցիր» շատ լաւ արի. թող գիտենայ պարոն Նախարարեանը թէ ում հետ ունէ գործ: Նա երևակայում է թէ իւր թափանցիկ աչքերով և անոյշ խօսքերով արդէն սիրուս կրակ է գցել: Կարծում է թէ այս գաւառացի կնիկը իւր կեանքում մի շնորհքով մարդ չէ տեսել, արի ես սրան իմ հրապուրիչ դէմքովս սիրուս կալրեմ... ինչպէս չէ, յաղթեցիր ինձ պարոն Նախարարեան ու գերի արիր.... հա, հա, հա... (Տառձէւու) հարկաւոր է մի այնպիսի խաղ խաղալ, որ նորա հպարտ կնիկը իւր չափը ճանաչէ:

ԵՐԵՒԱՅԹ Վ. VI.

ՏԻԿԻՆ ՀԵՔԻՄԵԱՆ և ՄԱՐԻՄՄ

ՄԱՐԻՄՄ. (աշ իրշ դունից չէտու բան) Բարով, խանում ջան:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Մարիմմ, մի վախիր, ներս արի, բերիր:

ՄԱՐԻՄՄ բերի, բայց սիրոս դողում է, որ խանումս չիմանալ:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Մի վախիր, մի ժամաւայ մէջ կառ-

Նեմ ձեւը ու մաշից յետոյ կդաս կըտանես. (բառալով
բախչան) այս միշտ այն է, որ այն գիշերը հագած
ունէր: Այս ի՞նչ է, տակիզ բամբակ է դարսում..

ՄԱՐԻԱՄ. (Ժողովական) Ի՞նչ անէ խեղճը, որ շատ
նիշար է....:

Տիկ. Հեթիվ. Այս տեղ էլ, այս տեղ էլ, հա, հա,
հա.... յետոյ պարոն Նախարարեանը չգիտէ, որ
Կնիկը վրան մի փուլթ բամբակ է մանածում....

ՄԱՐԻԱՄ. (Ճաղապահով) Իհարկ է կրգիտենալ:

Տիկ. ՀեթիՄ. Մարիամ, այն գեշերը ինձ այնպէս
լժուաց, թէ խանումդ երեսին էլ սիպտակ դեղ է
քսում:

ՄԱՐԻԱՄ. Սպիտակ դեղ չէ, պուդը է զործածում,
իսկ գեշերները երեսը, ձեռքերը և կուրծքը շփում է
Ալմօն-կլիմով, որ կաշին կակղի։ Թաղերն էլ թէւ...
(Դրեւայ յալում են բժշ. Հետեւ հասաւուաւ յայնը և քայլերը):

Տիկ. ՀեթիՄ. Ամուսինս գալիս է. դու հիմայ գնա, ճաշից լետոյ արի, բաղզեցդ էլ ստացիր ու բօխ- չադ էլ տար, որ իմանան:

ՄԱՐԻԱՄ. Հոգուտ մեռնիմ, խանում (շպառ բար-
է վարդաբան այ բանելուից):

TETRAHEDRON VII.

ԲԺԻՇԿ և ՏԵԿԻՆ ՀԵՖԻՄԵԱՆՔ

ՀԵՔԻՄԵԱՆ. (Հայութ Դանելիշի անդամ Տղամարդկան լուսաբառ) Կո՞րաւ, վերջապէս, քոյ Նախարարեանր:

Տիկ. Հեթիվ. Այդ բնչ է հալու, մի վրագ նայեր. Էլի դնացիր հողերի մէջ շաղախնուելու:

ՀԵՔԻՄԵԱՆ. Այս, բաղչայումս աշխատում էի:

Տիկ. Հեթիք. Աւելի լաւ կլինէք, որ դու քոյ հիւանդներովը պարապէիր, քանց թէ կանանչի և բողկցանելովը:

ՀԵՔԻՄԵԱՆ. Մէկը միսին չէ արգելում, խանումս:

Տիկ. Հեթիլը. «Զէ արդելում». բոլորովին ծուլացել ես և թժմրել. բժշկութիւնը քեզ համար պատիժ ես համարում. Էլ ոչ կարգում ես, ոչ սովորում, գիտեցած էլ օրէց օր մոռանում ես: Ի՞նչ զարմանք, որ մի որ և իցէ Նախարարեան բոլոր հիւանդներիդ խլէ ու մեզ հացից զրկէ:

ՀԵԲԻՄԵԱՆ. Սպասիր, սպասիր. մի վըա տալ մի-
մեանց վրայ: Կինարմատը որ սկսեց յարձակուիլ էլ
ինչ ասես կասէ, սուտ, դորթ, բոլորը կը խառնէ:
Երբ հարկաւոր է բժշկել—ես բժշկում եմ և, փառք
Աստուծոյ, գեռ իմ անփոյթութիւնից ոչ ոք չէ մե-
ռել, իսկ ձեր նախարարեանը կարճ միջոցու մ արդէն
երկուսին այն աշխարհը ուղարկեց:

Տիկ. ՀիմքիՄ. Ո՞վ է մեղաւոր, երբ դու ինքդ ես
նորա համար ճանապարհ բաց անում. ահա, կը տես-
նես որ նա մեզ ոտի տակ կ'առայ: Արդէն շատերը չէ
թէ միայն քեզանից, այլ ինձանից էլ երեսը շուռ
են տալիս: Անցեալ գիշեր ես այդ բանը լաւ
նկատեցի:

ՀԵՖԻՄԵԱՆ: Ես մեծ պատճեն պատրի, եթէ Նախա-

բարեանի կինը կարողանալ բոլոր երկրպագուներիդ
էլ խլել:

Տիկ. Հեթիթ. Ո՞վ, այն թօջան... հա՛, հա՛,
հա՛...: Իւր ո՞ր արժանաւորութիւններով նա պիտի
կարողանալ մարդ զբաւել...:

Հեթիթեան. Աւելի լաւ եթէ ոչ ոքի չէ կարող
դլիսից հանել. զոնէ նրա ամուսինը հանգիստ կլինի:

Տիկ. Հեթիթ. Իսկ դու շատ անհանգիստ ես.
այդ լաւ է: Բացատրէ, խնդրեմ, ինչ իր նշանակէ
առածդդր...:

Հեթիթեան. Խնդրեմ, ինձ հանգիստ թոնդ:

Տիկ. Հեթիթ. Ո՞չ, ես անպատճառ բացատրու-
թիւն եմ պահանջում: Կուզեմ իմանալ թէ երբ եմ
քեզ անհանգստաթեան պատճառը տուել: Ջատ կա-
րելի է, որ ես ինքս ինձ վնասում եմ՝ ամէնքի հետ
խօսելով, ծիծառելով, ազատ ու պարզ վարուելովա:
Բայց ես երբէք իմ բանը այնտեղ չեմ հասցնիլ, որ
դուք, պարմն, իրաւունք ունենալիք հաւատ ընծայել
չար լեզուներին: Ընդհակառակը, ես կարծում էի թէ
դուք երախտապարտ կը գտնուիք դէպի ինձ: Գուք
լաւ զիտէք, որ ես իմ վարլեցողութիւնովմ, իմ ու-
րիշներին հաճոյանալովս միայն աշխատել եմ տա-
րածել և մեծացնել ձեր պրաքտիկը: Հասարակու-
թիւնից կախումն ունեցող մի մարդու համար՝ ինձ
նման կնիկը մի գանձ է: Իսկ դուք, պարոն, դեռ
ըստորեցիք ինձ դնահամել...

Հեթիթեան. Ուղիղ է. դու միշտ անմեղ ես, որով-

հետեւ ես քեզ աւելի եմ իրաւունք տալիս և հաւատ
ընծայում, քանց թէ պէտք է...

Տիկ. Հեթիթ. Ի՞նչ ասացիք, ի՞նչ...:

Հեթիթեան. Բաւական է խնդրեմ, դու արդար
ես, ես քեզ ոչնչում չեմ մեղադրում...:

Տիկ. Հեթիթ. Կը համարձակուէիք:

Հեթիթեան. Ես էլ բանը այդտեղ չեմ հասցնիլ,
որովհետեւ եթէ հիմնաւոր կասկածի առիթ ունենալի,
տեղիք տուողը էլ ձեռքից չէր պրծնիլ — վիրաւոր-
ուած արջի նման կը ջարդէի, կը փշրէի...: Դու
ինքդ այդ լաւ զիտես:

Տիկ. Հեթիթ. Այդպէս հա՛. Հիմայ եմ իմանում թէ
որ աստիճանի յարգում էք դուք ինձ: Ջատ շնորհա-
կալ եմ (Յօնչան առանելով բռնը և գոռամ աջ դանից):

Հեթիթեան (Զէնաէ) Այս էր պակաս: (Յանձնան
Քջ հանգուըն) Ասացէք, ինդրեմ, ով է այս չարու-
թեանց պատճառը, եթէ ոչ Նախարարեանը... Այս
մարդը եկաւ չեկաւ, հանգստաթիւնս խանգարեց,
մաղձս խառնեց և հիմայ ինքս էլ չեմ իմանում, թէ
ում վրայ թափեմ բարկութիւնս: Փողոց չեմ կարո-
ղանում դուրս գնալ — կասես ամէնի առաջ մեղաւոր
լինիմ: Ամէնքն էլ երեսիս այնպէս են նայում, որ
կարծես թէ ուղում են ասել «Հ՞ը, բանդ վիթովկ է.
Նախարարեանը կտրում է հացդ...» (Նէրս ենողին)
Ի՞նչ կուզեմ:

ԵՐԵՒԱՅԹ VIII.

ՀԵՔԻՄԵՍՆԸ և ՍԵՐՈՅԸ.

ՍԵՐՈՅ. (Այ տահից հաղողով և ժաշուելով) Թողութիւն կը նես, աղաս.

ՀԵՔԻՄԵՍՆ ի՞նչ կուգես.

ՍԵՐՈՅ. Ըսելիք ունիմ.

ՀԵՔԻՄԵՍՆ ի՞նչ ասելիք.

ՍԵՐՈՅ. (Տօքէնառով) Աս նոր դօխտուրն ի՞նչ է, աս որ հիմա հրամանոցդ մօտ եկեր էր... ասօր պատճառաւ աս առաւօտ բան մը անցաւ:

ՀԵՔԻՄԵՍՆ. ի՞նչ բան:

ՍԵՐՈՅ. Իմ խնամի Թագոսը ի՞նչ է, անոր հետ խօսքի բռնուեցանք: Բախկալի խանութէն կուգալի, քիչ մը խահվէն մտալ, խնամի Թագոսն ալ հոն էր: Խօսք եղաւ ատ թեաղայ դօխտուրին վրայ. «ապա ի՞նձ աչքի լուս չես ըսեր, խնամի Սերոյ, որ ալ հէջ ըախի չպիտի խմեմ» կըսէ հարիֆը, համայ ինքը սարխօշ է... Ուխտդ, կրսեմ, զստուած լսող կատարող եղնի: Պատմէ նայինք»:

ՀԵՔԻՄԵՍՆ. Կարճ կտրէ պատմութիւնդ:

ՍԵՐՈՅ. Խնամի Թագոսը, բարեկամաց խորհուրդով, քանիմը օր է ամէն առաւօտ կերգայ ադ դօխտուրին քով. անալ կը նստեցունէ քովը ու կը հրամայէ քնել: Թագոսն աղէկ կը քնանալ. երազին մէջ հրեշտակ մը կուգայ, ձեռքէն կը բռնէ, կը պո-

ռայ՝ «Թագոս, բախին գէշ բան է, ալ բախի չը խմես»: Թագոսն ալ կսէ՝ «լաւ կեղնի՛»:

ՀԵՔԻՄԵՍՆ (Բնա երան) Հիպնոտիզմն է անում, հետաքրքիր է:

ՍԵՐՈՅ. Լաւ մը քնանալէն ետքը՝ դօխտուրը Թագոսին կը զարթուցնէ, կսէ՝ «ելէ գնալ գործիդ»: Խնամի Թագոսն ալ շիտակ կուգայ միկիտանին: Ասօր ալ սարխօշցած շատ մը գովեստներ տուաւ թեաղայ դօխտուրին ու ետքն ալ, երբ համարձակեցաւ գէշ զրուցել հրամանոցդ մասին, ալ չդիմացայ՝ հարիֆին անանկ զարկի, որ խնամիս արիւնվլիկ եղաւ... Գու, կըսեմ իմ աղալին...

ՀԵՔԻՄԵՍՆ. Դարձեալ նոր վորձանք, տօ եղբայր, քեզ ով է խնդրում վողոցներումը ինձ պաշտպան կանգնես...:

ՍԵՐՈՅ. Է՛հ. քանի որ ձեր հացը կուտեմ...:

ՀԵՔԻՄԵՍՆ. Հիմայ լաւ կը լինի, որ այդ խնամիդ քեզ դատի տանէ:

ՍԵՐՈՅ. Սաքի մախսուս պիտի որ դատի երթայ: Է՛, թող երթայ. ինչ կեղնի եղնի...:

ՀԵՔԻՄԵՍՆ. Գնա, գնա, հեռացիր (Ուրաշը դուր է գնում): Այս էլ զլխիս նոր ցաւ: Հիմայ երևակայեցէք Սերոբին ու իր խնամուն դատուելիս: Կին, տղամարդ, մեծ, փոքր—եկել լցուել են դատարանը, թէ ի՞նչ է—այնտեղ երկու հարբան ծառակը պիտի եւրեանց կարծիքները յայտնեն մեր՝ բժիշկներիս զիտութեան մասին: Ցետոյ էլ, իհարկ է, շաբաթներով

և ամիսներավ պիտի խօսան տների մէջ և պիտի պնդեն, որ ինքս անձամբ խրատել եմ ծառալիս այդ-պէսի տգեղ ցոյց անել հակառակորդիս դէմ....

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ IX.

ՀԵՔԻՄԵԱՆ և ՍԻՐԵԿԱՆ ԱՂԱՅ.

ՍԻՐԵԿԱՆ (Ֆէջ աւուշի ու ուներից) կը համարձակիմ աղալիս խաղաղութիւնը խանգարելու...

ՀԵՔԻՄԵԱՆ. (յեր նայելով) Հրամայեցէք Սիրեկան աղայ.

ՍԻՐԵԿԱՆ. (Խոնարհ ոշջունիւ հոգէնում է և երչու չեւուուլ լուլէնում է բժշկի չեւուուլ) Երկու օր է հրամանոցդ թանկագին առողջութիւնը հարցնելու կարող չեղալ....

ՀԵՔԻՄԵԱՆ. Հրամայեցէք (Բառի աւուուց յոյց պաշտ):

ՍԻՐԵԿԱՆ. (Հանելով պատրասի որուիլ՝ մեծարում է բժշկին և իսկը առջելով) Ես ալ հալ չունիմ, աղաս: Գիշերը ձախ կողքիս ծակոքսէն բռնուեցայ... փորձանք պիտի զար գլխուս.... Ամաչեցի ան ատեն աղալիս անհանգիստ ընել: Ետքը հրամանոցդ պատուերին համեմատ եախու կպցուցի...

ՀԵՔԻՄԵԱՆ. Օգնեց:

ՍԻՐԵԿԱՆ. Ե՞լ, որուն պատուիրածն է, որ չօգնէ: Աղէկ մը ալրեց, կաշիս արմատէն փրցուց....: Համայ ասօր գենայ կը ցաւի....

ՀԵՔԻՄԵԱՆ. Ոչինչ, կը անցնի...:

ՍԻՐԵԿԱՆ. Կը վախիմ թէ նորէն սաստկանայ...: ՀԵՔԻՄԵԱՆ. Պէտք է կրկնել նոյնը: ՍԻՐԵԿԱՆ. Ալ կաշի չըմնաց, որ կպցունենք...: ՀԵՔԻՄԵԱՆ. Վնաս չըկայ, կ'անցնի: ՍԻՐԵԿԱՆ. Կամք քոյ օրհնեալ լինի, մեռնիմ նէ գենէ հաւատարիմ և անձնուէր ծառադ կըմնայ: Ասող եղաւ թէ՝ Սիրեկան աղայ, հինգ տարի է ատանկ կը տանջուիս, օրմն ալ թեազայ դօխտուրին հարցուր»....

ՀԵՔԻՄԵԱՆ. (Ըստհատելով) Վատ խորհուրդ չէ. շատ ուրախ կլինիմ, դիմեցէք: Նա ձեր մէջ իսկոյն մի շարք տեսակ տեսակ հիւանդութիւներ կը գտնէ և որը ելեքտրականութիւնով, որը հիպնոտիզմով քոլորն էլ շուտ կըբժշկ... նա շատ քաջ է հնարքներ գտնելում: Հա, հա, հա....

ՍԻՐԵԿԱՆ. (աւշից վէր լուցէլով) Նախարարեանցին, ես, քաւ լիցիս: Զեռքիդ հոգիս ուրախութեամբ կաւանդեմ, իսկ թշնամուդ չեմ գիմիլ... Մանկութիւնէս սովորած եմ բարեկամացս հաւատարիմ մընալ...: Նախարարեանը, զիտէք...

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ X.

ՆԱՅՆԻ և ՏԻԿ. ՀԵՔԻՄԵԱՆ

ՏԻԿ. ՀԵՔԻՄԵԱՆ. (Ներ գալով) Դարձեալ նախարարեանի մասին էք խօսում:

ՍԻՐԵԿԱՆ. (Հոռոտ ու հաւարարում է և քանի մէ անդում)

յեւ-էլ հոմքո-ըեւը) Աննա Գավրիլովնայ, իմ աչքի լոյս,
իմ հրեշտակ,..

Տիկ. ՀիքիՄ. Թոպէ չէ անցնում, որ այդ մարդու
անունը ըլլվշուի:

ՍիրԵԿԱՆ. Ազատ ինձ ալ կուղէ Նախարարեանին
քովն ուղարկել բժշկուելու: ՀԷ, ՀԷ, ՀԷ (ՀԵՖԵԱՆԻ-
ՌԻԵՐՈՒ) Գեղագործ Ագօլֆը սարսափած է անոր տու-
ած դեղատոմսերէն. միշտ, կրուէ, կը դրէ թոյն, թոյն,
թոյն, ան ալ առանց չափսի: «Զեռքերս կը դողան,
կրուէ ինդ Ագօլֆը, երբ Նախարարեանի պատուիրած
դեղերը կը պատրաստեմ, այդքան ալ թոյն տալ
կըլինի»...

ՀիքիՄԵԱՆ. Այդպէս է անում, որ կարճ միջո-
ցում երկուսին գերեզման իջեցուց:

ՍիրԵԿԱՆ. Արա, արա (ԳՅ-ԵՎ շարժելու): Ինքն
ալ շատ կասկածելի բարքի տէր կերևայ, անսանձ
է: Անցեալ օրը ինձի կոէ՝ ձեր կառավարած դպրոցին
մէջ կարդ ու կանոն չկայ. կանանց բարեգործական
ընկերութեան վրայ կը խօսի: Ճատերն ալ կսեն թէ
վնասակար մարդ է:

Տիկ. ՀիքիՄ. Փոլթ չէ: Նրա կնոջ գեղեցկու-
թիւնը իւր մարդոյ բոլոր պակասութիւնները կը
ծածկէ: Ձէ որ հիմայ նա քաղաքիս մէջ առաջին
տիկնոջ դերն է խաղում:

ՍիրԵԿԱՆ. Ելէնա Պաւլովնան, առաջնակարդ
դեր, հԷ, հԷ, հԷ: Ձէ, աչքիս լոյս, չէ: Աննա Գաւ-
րիլովնայի վայլին հետ ով կարող է մըցիլ...: Զեռքդ

շնորհէ համբուրեմ, հրեշտուկս (յԵ-ԿԱ ՀԱՄԲՈՒՐԵՄ է):
Ջատ կը ցաւիմ, որ մենք մարդ չենք ճանաչեր, ա-
մէն նորեկին կոլը կոլը հաւատ կընծայենք: Գիտէք,
աղաս, ձեր փոխարէն ես ինձ վիրաւորուած կը հա-
մարեմ, որ մեր հասարակութեան մէջ երախտագի-
տութեան զգացմունքը վերացել է... Առ Նախարար-
եանէն ես ալ քուն չունիմ: Մէկ որտի կուգամ թէ
գլխուն անանկ խաղ խաղամ, որ չափը ճանաչէ:

Տիկ. ՀիքիՄ. Մանաւանդ կինը, կինը, բնչպէս
է մեծամտվում:

ՍիրԵԿԱՆ. Ես անանկ խաղ կըսեմ, որ ան ալ
ծաղի առարկայ դառնայ:

Տիկ. ՀիքիՄ. Ի՞նչպէս:

ՍիրԵԿԱՆ. Հնարք շատ: Գիտէք, ծաղրած մար-
դը կը խոնարհի, թևերը վար կը թողու...

Տիկ. ՀիքիՄ. Ես շատ ուրախ կը լինիմ, եթէ
Նախարարեանի կինը մի լաւ խրատուի:

ՍիրԵԿԱՆ. Իհարկ է, վնասակար միջոցների դի-
մելու չէ: Բայց անանկ թեթև, գուարձալի դաս մը
իրենց ալ օգտաւէտ կեղնի:

ՀիքիՄԵԱՆ. Ո՞վ պիտի տայ նորան այդ
դասը:

ՍիրԵԿԱՆ. Թէսաւրոսը կըսէ թէ...

Տիկ. ՀիքիՄ. (ԸԵ-ԿԱԿԵԼՈՒ) Խոկ դուք ինչ մի-
ջոց էիք առաջարկում...

ՍիրԵԿԱՆ. Ե՞ս, ես, աչքիս լոյս, ոչինչ: Ես մի-
այն ըստ թէ հնարքներ շատ կան...

ՀԵՔԻՄԵԱՆ. Օրինակ.

ՍԻՐԵԿԱՆ. Օրինակ՝ քանի որ հոս զագէթայ չկայ, վաղը քաղաքիս փողոցներում փուբլիկացիա կպցուցած եղնին, թէ դօխտուր նախարարեանը, աս երկու օրուալ մէջ քաղաքիցն հեռանալու պատճառաւ, իր կահկարասիքը շատ աժան կը ծախէ։ Ամենքն ալ կվաղին, կը լցուին տունը... նախարարեանը կը բարկանայ, կը պուայ, կը ծուայ... Աս ծաղը չէ։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Երեակայում եմ թէ կինը ինչպէս կը տուաքուի չարութիւնից. ասում են՝ բնութեամբ շատ չար է...»

ՍԻՐԵԿԱՆ. Օձի չափ չար։ Աս ալ ըսեմ, այնքան ալ հապատն է, որ ատանկ խայտառակութեան ըլ գիմանալով, շատ կարելի է, որ մարդուն իրաւ ըստիպէ այս քաղաքէն հեռանալու։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ճատ սիրուն կը ինի, շատ։ Անպատճառ պէտք է անել այդ բանը։ (Բժիշկ Հետեառն էր նայելով) Թէ այն խօսքերից յետոյ, որ մէկ ժամ առաջ լսեցի իմ ամուսնուց, աւելի լաւ կինի որ ամենևին չը խառնուիմ...»

ՍԻՐԵԿԱՆ. Ի՞նչ ըսաւ, հրեշտակս, ի՞նչ...»

ՀԵՔԻՄԵԱՆ. Մի ընտանեկան խօսակցութիւն էր, որ այլոց չի վերաբերի։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. (Ֆալքեն) Ճատ հետաքրքիր և քաղաքավարի խօսակցութիւն էր։

ՀԵՔԻՄԵԱՆ. Խնդրեմ ձեռք վեր առ։ Գու տես-

նում ես թէ ես ինչպէս զրդուուած եմ։ Ինձ հանգստութիւն է հարկաւոր. հասկացիր, վերջապէս։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. (Ֆալքեն) Ո՞րտեղ կայ այդքան հասկացողութիւն, որ հասկանամ։ (Սիրէկան աշային) Ո՞ւմը գրել տանք և յանձնենք պատերի վրայ կպցնելը...»

ՍԻՐԵԿԱՆ. Ես, աչքի լոյս, հանաք ըրի, ըստի թէ անպատճառ կատարուի. իսկ գուք իրաւ կարծեցիք։ Զարժէ, իմ հրեշտակ, չարժէ։

ՀԵՔԻՄԵԱՆ. Իհարկ է չարժէ։

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. «Իհարկ է»... Գուք մի խելացի հեռատես մարդ էք... Թող ուրիշները գան մեր աչքը հանեն, իսկ մենք հանգիստ կը նստենք ու մեր կնոջ հետ քաղցր խօսակցութիւններով կը զբագուինք թէ։ «Վիրաւորուած արջի նման կփշրեմ, կը շարդեմ»...»

ՀԵՔԻՄԵԱՆ. Բաւական է վերջապէս, զլուխս տուաքեց։ (Սիրէկան) Գուք էլ, Սիրեկան աղայ, շատ բարի խորհուրդ տուեցիք. հիմայ էլ այդ պիտի սկսուի։

ՍԻՐԵԿԱՆ. Ես ի՞նչ... ես իրեւ օրինակ ըսի, ըստի որ անպատճառ եղնի. ետքէն ալ ես չը սի թէ չարժէ։ Իբր հաւատարիմ բարեկամ պարտք կը համարիմ միայն խորհուրդ տալու՝ որ վատ չի եղնիր, եթէ քիչ մը զսպես անսանձ և յանդուգն թշնամուդ։ Եթէ ատ մասին գուք ալ Աննա Գավրիլօվնալին օդնէք, խօսք չկայ որ...»

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Իմ ասելս էլ այդ չէ (ամուսնուն) Աւրեմն չպիտի աջակցես ինձ այս գործում,

ՀԵՔԻՄԵԱՆ. Ես ալպիսի անազնիւ միջոցների
չեմ գիտի...

ՏԵԿ. ՀԵՖԻՄ. ԶԵՍ ուղում...

ՀԵԲԻՄԵԱՆ. Գու ինքնասածի մի կնիլի ես. յամառութեամբ պահանջում ես որ միշտ քոյ խօսքը կատարուի:

Տիկ. Հեթիվ. Ինքնասածի: ԶԵ կարելի լմանալ,
թէ ինչով էք դուք մեկնում իմ յամառութիւնը:

ՀԵԲԻՄԵԱՆ. Ես էի չգիտեմ:

Տիկ. Հեթիք. Լոռւմ էք, Սիրեկան աղաւ:

ՍԻՐԵԿԱՆ. Լաւ բան չէ, ի հարկէ:

Տիկ. ՀեթիՄ. Մի հարցրէք իւրեան թէ իմ
խորհուրդներս կատարելուց ե՞րբ է զղջացել: Ո՞րքան
սխալներից, վնասներից և նոյն իսկ վտանգներից ես
լրեան յետ եմ պահել: Եթէ ախօր մի յախոնի դիրք
և անուն ունինք, հարցրէք ամենքին թէ ումն ենք
պարտական:

ՍԻՐԵԿԱՆ. Յալտնի բանէ...

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Համարձակ կասեմ և Սիրեկան
աղան էլ լուս ունիմ կը վկայէ, որ թէ իմ ծանօ-
թութեանց մէջ, թէ իմ հարաբերութեանց մէջ՝ ես
միշտ աշխատել եմ նախ և առաջ պառել ձեր օգուտը...

Սիրեկան. Ճիշտ է:

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. Խոկ դուք փոխարէնը ի՞նչով էք
ինձ վարձատրում: Յիշում էք, ի՞նչեր ասացիք ինձ
այսօր: Ի՞նչ կը նշանակէին այն խօսքերը թէ՝ «Ալ-
բաւորուած արջի Նման կը փշրեմ, կը ջարդեմ»:

ՀԵԲԻՄԵԱՆ. (Համբերութեանից ուստի էլուծ) Պարձեալ, Տէր իմ... ՚ի սէր Աստուծոյ ձեռք վեր առ. յայտարարութիւններ էլ կը գրեմ, ինչ կուղես կը զրեմ, միայն թէ ինձ հանգիստ թող (ուստի և գուշաց ոջ ուստի բեկ):

ԵՐԵՎԱՆԸ XI.

ՏԻԿ. ՀԵՖԻՄԵԱՆ և ՍԻՐԵԿՈՆ ԱԴՅՅ.

Սիրեկան. Իհարկ է համաձայնութիւն սլետք
է... Զեռքդ տուր պազնեմ, աչքի լոյս (չէս-չը
պահում է):

Տիկ. Հիքիմ. Այսպիսի մարդուն գիմանալու
համար շատ համբերութիւն պէտք է: Ի՞նչ անեմ,
եօլայ եմ գնում, որովհետև հասարակութեան մէջ
մեր ունեցած դիրքը պահանջում է, որ ոչ ոք կառ-
կած չը տանէ մեր ընտանեկան երջանկութեան
մասին:

Սիրեկըն. Ապրիս, Հրեշտակս: Բոլորովին ատոր
հակառակը կրնէ ան Նախարարեանի կինք:

Տիկ. Հեթիվ. Նա կուրացած է իւր գոռոզութիւնից:

ՍԻՐԵԿԱՆ. Տեսնանք փութիկացիալէն ետքը դահայ զուռնդ կեղնի:

Տիկ. Հեթիվ. Նա շատ է վստահանում իւր շինծու գեղեցկութեան վրայ:

ՍԻՐԵԿԱՆ. Ի՞նչպէս թէ շինծու:

Տիկ. չեթիլ. Մի թէ չգիտէիք, որ երեսին դեղեր է քսում և կուծքը լքցնում է բամբակով:...

ՍԻՐԵԿԱՆ. Բամբակով. հէ, հէ, հէ... տուրձեռքդ պագնեմ....

ՎԵՐԵԳՈՅՑ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Նախարարեանի ընդունելութեան սենեակը: Դէմ առ դէմի դուռը տանում է բժշկի կաբինետը: աջ կողմը երկու դուռն՝ մէկը նախասենեակի, միւսը ներսնասենեակի: Զախ կողմը պատուհաններում ճաղիկներ, ակվարիում: Պատուհանների մօտ ասիական գորգերով թախտ, մութաքաներով, առաջը փոքրիկ սեղան: Սենեակի մէջ տեղը մեծ կողոր սեղան, որի վրայ թանկաղին կազմերով պատկերազարդ գըրքեր և զրելու գործիքներ: Այդ սեղանի շուրջը շարուածեն աթոռներ: Սենեակի մէջ կախած է մի սիրուն կանթեղ: Աջ կողմի երկու դռների մէջ տեղը՝ ընկուզէ ապակիսարոր մեծ պահարան, լի բժշկական գործիքներով և մեքենաներով: Պահարանի գլխին՝ նի անատօնմական վիզիւր: Առհասրտկ՝ սենեակի մէջ տիրապետում է աչքի զարնող շքեղութիւն:

ԵՐԵՒՅՑ Ի.

ԲԺԻՃԿ ՆԱԽԱՐԱՐԵԱՆԸ (Պահուածութեան լաւագույն հետաքաշ կամաց է սուրբ) և Տիկ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆ.

Տիկ. **ՆԱԽԱՐԱՐԵԱՆ.** Այսօր շատ հիւանդներ ունիս այցելելու:

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. Բաւականին:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Երեկոյեան դարձեալ տանը չես
լինել:

ՆԱԽԱՐԱՐ. Այս, քանի մի տեղ պիտի երթամ:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Եւ դարձեալ երեկուայ պէս
գիշերուայ ժամի երկուսին պիտի վերադառնաս:

ՆԱԽԱՐԱՐ. Չ'զիտեմ:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Երկի մի շատ վտանգաւոր հի-
ւանդ ունիս, որ կիս գիշերը անց՝ դարձեալ մօտիցը
չես հեռանում: Ճատ հետաքրքիր է իմանալ թէ ով
է այդ չքնաղ էակը, որ այդպէս զրաւել է քոյ ու-
շադրութիւնը:

ՆԱԽԱՐԱՐ. Երեկոյեան ես հիւր էի:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Հիւր էի՞ս: Խնչու ինձ էլ հետզ
ը տարար: Քանի անգամ քեզ խնդրել եմ, որ երբ
հիւանդների մօտ չես, այլ լոկ հիւր ես գնում, մի-
ասին երթանք, տպա թէ ոչ ես միշտ մենակ եմ
մնում տանը:

ՆԱԽԱՐԱՐ. Ո՞վ է քեզ արգելում, որ դու էլ տանը
հիւրեր ընդունիս: Փառք Աստուծոյ, արդէն բաւա-
կանաչափ ծանօթներ և բարեկամներ ունինք:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Նախ որ, ուղիղն ասեմ, այստեղի
հասարակութիւնը շատ անտանելի է և ձանձրացու-
ցիչ: Եթէ դու քեզ համար մի քանի հրապուրիչ տի-
կիններ ես ճարել, այդ չի նշանակիլ թէ ինձ ևս
ախորժելի է նոցա ընկերութիւնը: Սոդպիսի տիկնակք
միայն ձեզ են հաճելի, որովհետեւ տղամարդկանց
համար որքան մի կին բարոյապէս ընկած է և թե-

թե՝ այնքան յաւ: Երկրորդն էլ՝ միթէ մեր հիւրերը
քեզ տանը կը պահեն. ընդհակառակը՝ տանս հիւր
ունենալը, կարծում եմ, քեզ միջոց կտայ աւելի աղա-
տաբար շըջելու քո տկար կանանց մօտ:

ՆԱԽԱՐԱՐ. Դու շատ տարօրինակ ես նայում այս-
տեղի հասարակութեան վերայ և ՚ի զուր ես արհա-
մարում իմ ծանօթներիս: Պէտք է զիտենաս, որ ծա-
նօթութիւններս ձեռք եմ բերում ոչ ըստ իմ քմաց,
այլ իմ արհեստի, իմ մասնագիտութեան պահան-
ջիցը սուիպուած:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Թշուառ մասնագիտութիւն, զո-
նէ ձեր կանանց վերաբերութեամբ:

ՆԱԽԱՐԱՐ. Զարմանալի պահանջմունք է, որ մենք
ամեն տեղ երեսնք միշտ միատեղ և թեթևի տուած.
այդ մինչև անգամ ծաղրալի կլինի...:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. (Ըստհարերէ) Եթէ դու ինձ սրր-
տանց սիրում լինէիր, այն ժամանակ քեզ ծաղրալի
չէր թուալ մեր միասին լինելը:

ՆԱԽԱՐԱՐ. Սպասիր, սպասիր, ասեմ: Ծաղրալի է
այն պատճառաւ, որ մեր հիւր եղած ժամանակը,
երբ որ ես մի որևէ տիկնոջ հետ խօսում եմ, դու
աչքդ չես հեռացնում մեզանից և բարկութիւնիցդ
ը զիտես թէ ինչ անես: Այդպիսի վարմունքդ ամէնքը
նկատում են և ծիծաղում են մեզ վրայ: Բացի այդ՝
մեր միասին հիւր դնալու համար, պէտք է որ քեզ
էլ հրաւիրում լինեն. իսկ դու հէնց սկզբից այնպիսի
հպարտութեամբ և բարձրամտութեամբ վերաբերուե-

ցիր դէպի այստեղացիները, որ, իհարկ է, նոքա էլ ինտ քաջուեցին քեզանից և չը սիրեցին:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Ինձ, իբաւ է, չը սիրեցին, բայց քեզանով հիանում են այստեղի կանայքը:

ՆԱԽԱՐԱՐ. Ճատ ուրախ եմ եթէ այդպէս է: Դորանով իմ բժշկական զործունէութիւնը աւելի կը ընդարձակուի: Ով որ յաջողութիւն է ուզում ունենալ, նա պիտի կանանցը հաճելի դառնալ: Այս մի հին ճշմարտութիւն է:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Գու էլ այնքան հետամուտ ես այդ ճշմարտութեանը, որ էլ ամենսկին ժամանակ չես գտնում երեսիս նախելու:

ՆԱԽԱՐԱՐ. Դու, սիրելիս, իզուր ես ինքո քեզ տանջում.... չպէտք է այդ աստիճան կասկածաւոր բնաւորութեան տէր լինել....:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. (Ըստհարեց) Ո՞վ է մեղաւոր. դու չես տեղիք տուողը: Այս, ես շատ անհանդիստ եմ լինում, երբ մենակ եմ... Ես տանջում եմ հոգ- ով և միշտ երևակայում եմ, թէ ահա այդ միջո- ցին դու նստած ես մի այնպիսի տիկնոջ մահճակալի մօտ, որ հէնց քեզ հրաւիրելու համար հիւանդ է ձւացել, մօտդ կրտստվում է և քեզ աչքով է անում: Քանի մտածում եմ այս բաները մաշվում եմ և հալվում....:

ՆԱԽԱՐԱՐ. Հիւանդ երևակայութեան պտուղ է այդ, ուրիշ ոչինչ.

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Իսկ եթէ իրողութիւն լիսի և փաստեր ունենամ:

ՆԱԽԱՐԱՐ. Ես մեղաւոր չեմ, եթէ դու ամէն լամձիդ հաւատ ընծալես:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Ոչ, ոչ: Ես հաւատում եմ միայն սրտիս զգացածին: Իսկ սիրոս միշտ լիշեցնում է ինձ, որ դու ինձ չես սիրում, որ դու պսակուեցիր վրաս լոկ հաշիւներիդ համար:

ՆԻԽԱՐԱՐ. (ՀԵՂԱԿԱՆԵՐ) Հեղինէ:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Այն, հաշիւների համար: Յիշում ես թէ դու ինչ էիր, երբ մենք ծանօթացանք: Մի աղքատ ընտանիքի դաւակ, միշտ չքաւորութեան մէջ, հազիւ եկել էիր համալսարանից, ոչ անուն ունէիր, ոչ դիրք, ոչ դրամ, երբ մենք ծանօթացանք: Ես քեզ տուի ամենալին ինչ խոշոր դրամագլուխ, փառաւոր ազգականութիւն, հռչակ, դիրք: Այդ բոլորը ստանալու համար՝ դու ինձ ակամայ կամօք ստիպուած էիր վեր առնելու: Մի թէ ես չգիտեմ...:

ՆԱԽԱՐԱՐ. (ՎԵՐ ՀԵՂԱԿԱՆ ՊԵՂԵԿ և ափ հաշելով ինչու երան) Պատիճ է: (ՏԵՐԵՆԱՀԱՆ ՀԱՆՉ) Հանդարտութիւն չեղինէ, հանգստացիր և այն ժամանակ դու ինքո կը հասկանաս թէ ինչ դատարկ բաներ ասացիր (ՅԵՒՇ ՀԱՆՉ ԳԼԻՒՆ ՔԱՆՉՈՒ): Այսպէսով դու ոչնչացնում ես քեզ և ստորացնում ինձ...

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. (ՊԱՐԱՐԵՆ ՍԱ ՀԵՂԵԿ ՀԵՂԵԿ ԱՇԽԵԼ ՏԱՐԱՐ ՀԵՂԵԿ) Եթէ դու ինձ դոնէ փոքր ինչ սիրեիր, դու կը հասկանայիր իմ ցաւը և վիշտը:

ՆԱԽԱՐԱՐ. Լօիր ինձ, հանդարտութիւր. մի եր-

և հաւատացիր քեզ զանազան դատարկ բաներ և հաւատացիր, որ խոկոյն կը փարասուիս ցաւիցդ էլ, մտածութիւնիցդ էլ:

ՏԻԿ. ՆԱԽՍԱՐ. Ա՛խ, Նիկողայոս («ԶԵՂՈՎ ՅԵՒԴ»):

ՆԱԽՍԱՐԱՐ. Այս, այս իմ բարի խորհուրդն է:

ՏԻԿ. ՆԱԽՍԱՐ. («ՀՐՈՋ ԱԿԿՈՆ Է ԱԲԱՆԱՆ») Սիրելիդ լիմ (պաշում է չեւաց և շրմառնաներից չեւառաջում):

ՆԱԽՍԱՐԱՐ. (ՆԱԽԵՐՆ ԺԱՅԱԿԱՅԻՆ) Ինձ արդէն ժամանակ է հագնուելու. ընդունելութեան ժամն է:

ՏԻԿ. ՆԱԽՍԱՐ. (ՔՇԻ ՔԵՆԱՉՆ) Միշտ այդպէս է, միշտ քեզ ինձանից խլում են:

ՆԱԽՍԱՐԱՐ. Ի՞նչ անել, զործն է պահանջում: Քո բերած գրամբ ապագայում մեզ հազիւ կը բաւէ. այժմ պարտական ենք գեռ լինքներս աշխատել: Ահա, երբօր կը հարստանանք, մենք էլ մայրաքաղաքում ապահով և փարթամ կեանք կը վայելինք և այն ժամանակ ես էլ շատ աղատ միջոց կունենամ միշտ հետգ լինելու:

ՏԻԿ. ՆԱԽՍԱՐ. (ՀԱՐՅԱԴ ՆԱԽԵԼՈՎ ԱԲԱՆԱՆ) Ո՞ն ժամանակ... (ՔՊԵԼՈՎ ՆԵՐԴՐԵԿ և ԿԱԾԵՐ ՅԱՅՆՈՎ) «Այն ժամանակ» չես թողնիլ ինձ...

ՆԱԽՍԱՐԱՐ. Ի՞նչ բաներ ես մտածում, չեղինէ,

ՏԻԿ. ՆԱԽՍԱՐ. Ա՛խ, այդ մտածմունքներն են, որ ինձ ուզանում են (ՊԻՐԱՐ ՊՐԵՐԻ Է ԳՆՈՒՄ):

ՆԱԽՍԱՐԱՐ. (ՔԵՆՈՒ) Համը զնաց. այս տեսարանները համբերութիւնս հատեցնում են: Բայց ինչ անեմ... ինչպէս վերջ տամ,...

ԵՐԵՒՈՅԹ Ա.

ՆԱԽՍԱՐԱՐԵԱՆ և ՄԻԶՆՈՐԻԵԱՆ (ՀՊԱՊ ԱՆԻՐ ԳՐԱՆՑՈՒՅ),
ՅԵՒԴԻՆ ԲԵՐԵՐ):

ՄԻԶՆՈՐԻԵԱՆ. Ի՞նչ կեղտստ բան, ի՞նչ յածութիւն:

ՆԱԽՍԱՐԱՐԵԱՆ. Ի՞նչ է պատահել.

ՄԻԶՆՈՐԻ. Ահա կարդացէք, տեսէք ինչեր են կպցրել փողոցում:

ՆԱԽՍԱՐ. Ի՞նչ է (ՔՐԵԱՄ է) «ԲԺԻՇԿ Նախարարեանը պատիւ ունի յայտարարելու, որ ստիպուած լինելով այս քանի մի օրուայ մէջ հեռանալու քաղաքիցս... ծախում է իւր կահկարասիքը և իրեղէնները ամենաաժան դնով»:

ՄԻԶՆՈՐԻ. Տեսնում էք ի՞նչ ստոր միջոցների են գիմում:

ՆԱԽՍԱՐ. (ԱՆ-ԴԱՐ ԱՆՁՆԻ ՎՐԱ ՇԵՆԼՈՎ) Ջատ լիմար և լիրը հանաք է:

ՄԻԶՆՈՐԻ. Այդ ոչ թէ հանաք է, այլ մի չարութիւն, որի նպատակն է ձեր վարկը վայր զցել և վնասել ձեզ: Այդ չար նախանձի պտուղ է և ես ամեն ձիգս պիտի թափեմ հեղինակին հրապարակ դուրս բերելու:

ՆԱԽՍԱՐ. Իրաւ, ում զործը պիտի լինի այդ բանը:

ՄԻԶՆՈՐԻ. Ես մէկի վրայ թէև կառկած ունիմ, բայց քանի որ հաստատ վրաստեր չունենամ, չեմ ասիլ անունը:

ՆԱԽԱՐ. Իմ կարծիքով՝ չարժէ ոչ վրդովուիլ,
ոչ ուշադրութիւն գարձնել, այլ պէտք է արհամար-
հանքով բանի տեղ չդնել...

ՄԻԶՆՈՐԻ. Խոկապէս արդպէս էլ պէտք էր անել,
բայց ոչ մեր գաւառական քաղաքում։ Արդէն ժողո-
վորդը այստեղ ու այնտեղ զիզուած հետաքրքրու-
թեամբ կարդում է պատերին կպցրած այդ թեր-
թիկները, որոնցից մինը հազիւ կարողացաւ պոկել և
բերել։ Կարգացողները հիմայ կը սկսեն դատել, քն-
նել՝ թէ ինչէ պատճառը, որ դուք արդպէս շուտ
հեռանում էք այստեղից. էլ ինչ ասես կասեն. զրո-
ղին էլ այդ էր հարկաւոր։

ՆԱԽԱՐ. Բայց ինչու համար... Ո՞ւմն ինչ եմ
արել... Եթէ պ. չէքիմեանը վրաս քնթուել է, թէ
ինչու եմ եկել այստեղ բժշկութեամբ պարապելու,
կարծեմ իրաւունք չունէ, որովհետև ձեր քաղաքը
այնքան բազմամարդ է, որ գեռ մի հինգ ուրիշ
բժիշկների համար էլ գործ կը գտնուի այստեղ. իսկ
եթէ նրա հիւանդները ինձ են դիմում—իմ մեզս չէ։

ՄԻԶՆՈՐԻ. Ես դեռ ոչինչ չեմ կարող ասել,
մինչև որ ճշտութեամբ չիմանամ։

ՆԱԽԱՐ. Ես հաւատացած եմ, որ գործի մէջ
խառն է տիկին չէքիմեանը, որ ամենից շատ է
զինուած իմ դէմ...

ՄԻԶՆՈՐԻ. Նա, ընդհակառակը, յարդանքով է
վերաբերվում դէպի ձեզ։

ՆԱԽԱՐ. Մի հաւատաք։ Կիտացէք, որ եթէ ես

այստեղ մի նախանձող թշնամի ունիմ—դա տիկին
չէքիմեանն է, իսկ նորա նման թշնամին վտան-
գաւոր է և ես պիտի նուաճեմ այդ թշնամուս։

ՄԻԶՆՈՐԻ. Բայց նա ինչ վնաս կարող է տալ ձեզ։

ՆԱԽԱՐ. Համարեա թէ ոչինչ։ Այնուամե-
նախիւ քանի որ նորա մէջ կալ ցանկութիւն ինձ
վնասելու, ես էլ պարտաւոր եմ նորան նուաճելու
և այնպէս հանդարտացնել, որպէս հանդարտա-
ցնում են վայրենի կենդանինքնին...։

ՄԻԶՆՈՐԻ. (Ը-Դ-Հ-Պ-Ե-Ղ) 2եմ կարծում թէ այդ
ձեր անկեղծ զզացմոնքը լինի։ Ներեցէք ինձ, բայց
կանանց վերաբերութեամբ արդպէս խօսել չէ կարելի։

ՆԱԽԱՐ. Ես ամենեւին չուզեղի ասել, թէ միայն
այս կէտից եմ նայում իդական սեռի վրայ։ Ընդհա-
կառակը, իմ զաղափարները կնոջ բարձր կոչման
մասին ձեզ յալտնի են և եթէ ինձ կարելի է մի
բանում մեղադրել, այդ այն է որ սիրտս չափազանց
զզայուն է դէպի գեղեցիկ սեռը։

ՄԻԶՆՈՐԻ. Գաղափարների մասին մի ուրիշ
ժամանակ էլ կը խօսինք, իսկ հիմայ ես շտապում
եմ. տիկնոջը իմ յարգանքս մատուցէք. ցտեսութիւն
(Դ-Ա-Ր- և Գ-Ն-Ռ-):

ՆԱԽԱՐ. (Է-Ա-Յ-) Ճնորհակալ եմ, եթէ ժամա-
նակ ունենաք դարձեալ մտէք այսօր։

ԵՐԵՒԱՅԹ III.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. (մենակ)

ՆԱԽԱՐԱՐ. (Հայոց մատուցութիւն) Օլինը վատ չէ սկըսուած: Մէջը մի հմուտ անձն է խառը, բայց թէ ով...: Իրաւ որ այսպիսի փոքրիկ քաղաքներում այդպիսի գէպքերը մեծ նշանակութիւն ունին և մէկ անգամից կարող են դատավճիռ կարդալ մարդու զլիսին: Իհարկ է տիկին չէքիմեանը հիմայ ուրախութիւնից չկայ. լաւ, տիկին, տեսնենք երազն ՚ի բարին կատարի թէ ՚ի չարն: Սակայն այս մտածմունքներից բան չի դուրս գալ. ընդունելութեան ժամն է, գնամ հաղնուիմ (Քառամատ է իւր հայութիւն):

ԵՐԵՒԱՅԹ IV.

ՍԵՂՄՈՍԵԱՆ և ապա ՊԱՐՁԱՄՏԵԱՆ

ՍԵՂՄՈՍԵԱՆ. (Պատուական պատուական մատուցութիւն ու հանդիպութեան ու ուղարկութեան) Վարը կարծեցին թէ հիւանդ եմ, դօխտուրին մօտ կուգամ, համա միտքս արիշ է: Քանի մը օրէն աղջկաս հարսանիքը պիտի եղնի. տէրտէրինց Գէորքին կը ճանաչնաք, ան որ ուեզդնի ուպրավինիան է, անոր տուեր եմ, Աստուած շնորհաւոր ընէ: Ասօր ալ կարդըցինք թէ դօխտուրիս հրաման եկած է, որ քաշուի երթայ աս աշխարհէն. ան ալ ունեցած չունեցածը սհաթ ու կիսուան մէջ պիտի

ծախէ եղեր... Կարելի է, ըսինք, մեզի ալ պիտանացու բան եղնի...: Կարծեմ թէ ես առաջինն եմ, գեռմարդ եկած չունի...:

ՊԱՐՁԱՄՏԵԱՆ (Կառաւակ, յէպոյ Սաղմանեանին աւանդութիւնի համարյակ) Յաջողում քաւոր...

ՍԵՂՄՈՍ. Ասծոյ բարին...

ՊԱՐՁԱՄՏ. Ո՞վ ունիս հիւանդ.

ՍԵՂՄՈՍ. Հէջ փառուք Ասծոյ. մենք առուտութիւն եկած ենք:

ՊԱՐՁԱՄՏ. Ես ալ: Ջիտակն ըսեմ, շտա կը ցավիմ դօխտուրին ասանկ խայտառակ երթալուն: Պատճառը, կըսեն, հին դօխտուրին կնիկն է. աս անոր հետ սիրահարութիւն ըրէր է, անոր էրիկն ալ գուբերնաթին զրեր է, ան ալ խիստ հրաման զրէր է ասօր թէ՝ «կրտսնուէ ատ տեղէն»....

ՍԵՂՄՈՍ. Ինձի ատանկ չըսին. ասօր կինը, կըսեն, ասիդնացի շինէր է, անոր համար Սիբիրեայ կը քշուին:

ՊԱՐՁԱՄՏ.. Դու սա աթոռը կը համենիս...

ՍԵՂՄՈՍ. Ջիտակը ես մեծ սեղանը կուզեմ... (Երիտասարդ էլ հանդիպութեան պահուակոյ էն անուան):

ԵՐԵՒԱՅԹ V.

ՆՈՅՆՔ և ՆԱԽԱՐԱՐԵԱՆ

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. (Աերս գալով աղջած) Այդ Բնէ էք անում, ով էք, ինչ էք կամենում:

ՊԱՐՁԱՄՑԵԱՆ և ՍԵՂՄՈՍԵԻՆ (Քառին) Հրատա-
րակած էք, որ...

ՆԱԽԱՐ. Թողէք և դուրս հրամայեցէք:

ՊԱՐՁԱՄՑ. Ինքներդ... զրած էք որ աժան...

ՆԱԽԱՐ. Ոչինչ չեմ զրած, խնդրում եմ դուրս
դնաք:

ՍԵՂՄՈՍ. Մենք առանց վարայի չենք եկեր...

ՆԱԽԱՐ. Ես ձեղ դարձեալ խնդրում եմ դուրս
երթալ:

ՊԱՐՁԱՄՑ. Ինքը կը կանչէ, ինքը կը վանտէ...:

ՆԱԽԱՐ. Ոչինչ չունիմ ծախու, ձեղ մոլորա-
ցըել են...:

ԵՐԵՒԱՅԹ VI.

ՆՈՅՆԲ և ՏԻԿ. ՄԱՀՏԵՍԵԱՆ

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍԵԱՆ. (Ա-ր Ա-շեշտ) Նիկոլայ իւա-
նիչ, Հոգիս, մոր, մւր էք դնում...:

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. Ոչ մի տեղ չեմ դնում: Պատե-
րին կպյրած յայտարարութիւնը — մի լիմար սուտ է՝
իմ ժշնամիներից հնարած, (Ք-անելին) խակ ձեղ, պա-
րոններ, ես խնդրեցի դուրս երթալ...

ՍԵՂՄՈՍ. Կը ներէք, աղաս եթէ մենք...
(Դուր է գումար):

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍ. Ո՞րքան ուրախ եմ որ չէք զը-
նում: Դուք հիմայ ինձ նոր ինանք տուիք: Զեզա-
նից զրկուիլը դիտէք թէ ինչ կը նշանակէ:

ՆԱԽԱՐ. Ճնողհակալ եմ, Ճարլոտայ Սավէլէվնայ,
փնզրեմ նստեցէք, (Պարզամականին) Եղբալը, քանիցս
խնդրեցի, որ դուրս զնաք...

ՊԱՐՁԱՄՑ. Ես բժշկուելու ալ զործ ունիմ...

ՆԱԽԱՐ. Վաղը հրամայեցէք, այսօր չեմ կա-
րող ընդունել:

ՊԱՐՁԱՄՑ. Տղուս զլուխը կը ցաւի.

ՆԱԽԱՐ. Վաղը բերէք.

ՊԱՐՁԱՄՑ. Կուղէի իմանալ հիւանդութիւնը և
խորհուրդ հարցնել....

ՆԱԽԱՐ. Այսօր չեմ կարող...

ՊԱՐՁԱՄՑ. Յատուկ ներողութիւն, եթէ աղախս
գլխացաւնք եղանք (Դուր է գումար):

ԵՐԵՒԱՅԹ VII.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ և ՏԻԿԻՆ ՄԱՀՏԵՍԵԱՆ.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. Սին, Ճարլոտայ Սավէլէվնայ.
տեսնում էք ինչ խաղեր են խաղում զլիխ իմ թըշ-
նամիքը...

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍԵԱՆ. Դուք չէք կարող երեա-
կալել, թէ ինչ տպաւորութիւն ունեցաւ. մեղ վրայ
այդ յայտարարութիւնը: Զեզանից չգրկուիլ և մնալ
դարձեալ բժիշկ չեքիմեանի ձեռքին — ոչ աւելի լաւ
է մեռնել: Հեքիմեանք կանանց կազմուածքի մասին
ամենակին հասկացողութիւն չունէ: Նա շատ կոպիտ
է, կնոջ ջղերը թէ ձիու ջղերը նորա աչքում միւ-

նոյն բաներն են: Բայց չէ որ կնոջ առաւելութիւնը նորա կրքերն են. սիրահարութիւն է թէ ատելութիւն, առաքինութիւն է թէ մոլութիւն—ամեն բանի մէջ կինը նախ և առաջ կրքի դո՞ւ է: Կանանց ընութեան պայմանները հասկանալու համար բժիշկը պէտք է փոքր ի շատէ հոգեբան լինի: Իսկ չէքիմեանը ինչ հոգեբան է: Նա մեր վարմունքի մէջ ոչ մի բարոյական շարժառիթ չէ ընդունում: Ամեն բանին նա այնպիսի պատճառներ է տալիս, որ օրինաւոր կինարմատը ամօթից կը կարմրի: Նա միշտ տղամարդկանց կողմն է. Էսկ ումը չէ յայտնի որ մեր կեանքի թունաւորողներն էլ տղամարդիկն են...:

ՆԱԽԾԻ. Չեր ամուսինը, տիկին, իւր բարի բնութեամբ, կարծեմ, այդ մասին բացառութիւն է կազմում....:

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍԵԱՆ. Ո՞վ ասաց ձեզ, աշխարհին յայտնի է որ իմ գժբաղդութեան պատճառը իմ Հայրապետ Արխիպիչի թուլութիւնն է: Նա երբէք ընդունակ չէ եղել ինձ հասկանալու. Երբ մէր ցաւին դարման անհլու համար մէկ անդամ դարձանք բժիշկ չէքիմեանին, զիտէք ինչ յանդուդն պատասխան տուեց ինձ «եթէ կուզես, ասաց, որ ամուսինդ մի քանի տարի էլ ապրի, հանգիստ թող նորան և մի զրգուիր»: Արի ու զիմացիր նորա կոպտութեանը; Նա չէ ուզում հասկանալ, որ երբեմն արիւնը գլուխս ընկած այնպիսի գրութեան եմ հասնում ես, որ պատրաստ եմ ամէն բան, ինչ որ միայն ձեռքս

ընկնի, կոտրեմ, վշշրեմ: Իսկ չէքիմեանը միշտ կրկնում է ինձ միւևնոյն բանը թէ «դու տիկին, քո անդուսպ կրքերով մարդուդ շուտով զերեզման կիջեցնես»...: Ասացէք լինդրեմ, այդ բժշկի պատասխան է... Վի հարցնող լինի թէ քիզ ինչ, մարդը իմս չէ, դու ինչ նորա սրտացաւ ես դուրս եկել: Վի անդամ էլ, զիտէք. յանդգնութիւնը ինչ տեղը հասաւ: Բրանեց ինձ մի ընկերութեան մէջ և հարցնում է՝ «դու, ասում է, այստեղացի ընիկ հաջի Սեղբոսի աղջիկը չե՞ս». «այո» ասում եմ:— «Բո սկզբնական, մանկութեան անունը Ճողակաթ չէ». «այո» ասում եմ: «Ուրեմն ինչպէս, ասում է, Ճողակաթը Ճարլոտայ դարձաւ, իսկ հաջի Սեղբոսը—Սավելի, որ հիմայ դու Ճարլոտայ Սավէլէվնայ ես կօչվում»: Ամէնքը ծիծաղեցին և ես այնպէս կարմրեցի, այնպէս կարմրեցի...

ԵՐԵՒԱՅԹ ՎԻԼ.

ՆՈՅՆՔ և ՏԻԿ. ՀԵՔԻՄԵԱՆ (ՀԵՂ ՀՊԱԿԱՆ)

ՆԱԽԾԻՐԱՐԵԱՆ. Անսա Գավրիլովնայ... Ո՛րքան պատիւ մեզ համար...

ՏԻԿ. ՀԵՔԻՄԵԱՆ. Այս րոպէիս լուր բերեն թէ դուք դնում էք... Բարեւ ձեզ Ճարլոտայ Սավէլէվնայ...

ՆԱԽԾԻՐԱՐ. Ես ծախում ենք մեր կահ կարասիքը...:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Այո, այնպէս լսեցի, թէ ամէն բան ծախում էք և գնում:

ՆԱԽԱՐԱՐ. Դուք էլ հաւատացիք...:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ի՞նչ կայ զարմանալու... .

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍ. Բարեբաղդաբար բոլորը սուտ է և այդ յայտարարութիւնն էլ սոոր մարդկանց գործ է: Նիկոլայ Իվանիչը չէ դնում (չեռաշը բառեւով) և չի էլ դնալ ու չի թողնիլ մեզ մենակ, որովհետև գիտէ որ մենք մեծ հաւատ ունինք դէպի խրեան, որ մենք իւրեան պաշտում ենք: Ես հիմայ դնամ: Նիկոլայ Իվանիչ այսօր անպատճառ անցէք մեր կողմը: Յտեսութիւն:

ՆԱԽԱՐԱՐ. Յտեսութիւն ձարլուտայ Սավէլէվինայր շնորհակալ եմ...

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍ. (չեռաշը աշեւով) Հաւատացած կացէք, Նիկոլայ Իվանիչ, որ մենք ամէն միջոց գործ կը դնենք, որ դուք մեղանից երբէք չը հեռանաք, (աին չեժիմեանին ինու հերպին) բարե արէք ձեր առ մուսնուն (ռառը և գնում):

ԵՐԵՒՈՑ Թ. IX.

ՏԻԿ. ՀԵՔԻՄԵՍն և ՆԱԽԱՐԱՐԵՍն

ՏԻԿ. ՀԵՔԻՄԵՍն. Ջատ ուրախ եմ, որ ձեր զընալը սուտ է դուրս գալիս: Յաս ունիմ, դուք այս բոպէիս էլ համոզուեցիք տիկին Մահտեսեանի խօսքերից, թէ որքան մեծ կորուստ կը լինէք մեզ համար եթէ իրաւ դուք այստեղից հեռանայք:

ՆԱԽԱՐԱՐ. Խնդրեմ, թողէք ձեր ծաղրը:

ՏԻԿ ՀԵՔԻՄ. Ի՞նչու էք ընդունում որպէս ծաղր: Միթէ ես էլ չեմ կարող լինել այն կանանց հաշվում, որոնք ձեզ պաշտում են և առանց ձեզ չեն կարող ապրիլ:

ՆԱԽԱՐԱՐ. Միտերնիդ է, որ դուք ինձ մի անդամ առացիք, թէ բովանդակում էք ձեր մէջ կանացի բոլոր պակասութիւնները: Ես հիմայ ստիպուած եմ հաւատալ, որ այդ բոլորովին ճիշտ է:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Գուք էլ այն ժամանակ ինձ պատասխանեցիք, կարծեմ, թէ ես «անտանելի» եմ:

ՆԱԽԱՐԱՐ. Ո՛չ «անտանելի». Ես ասացի որ դուք «հրապուրիչ» էք:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Հիմայ տեսնում էք որ ամենեին «հրապուրիչ» չեմ: Ուրեմն յետ առէք ձեր խօսքերը:

ՆԱԽԱՐԱՐ. Ընդհակառակը. Ես կրկնում և պընդում եմ, որ ոչ միայն հրապուրիչ էք, այլ և մեզ զմալեցնաղ, յափշտակող, դժուեցնող.

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Հա, հա, հա (ակ յետ ժաշուելով և համեստ չեւով) ներեցէք, որ անհանգիստ արի...

ՆԱԽԱՐԱՐ. Ճնորհ արէք տիկին: Ես այնքան երջանիկ եմ ձեզ այստեղ տեսնելով, որ ուրախութեամբ պատրաստ եմ ներել այն լիմարին, որ տարածել է իմ վախչելու յայտարարութիւնը: Ես մինչեւ անդամ շատ շնորհապարտ եմ նորան (ռանգը պային է):

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. (Աեր հետաշը) Յտեսութիւն:

ՆԱԽԱՐԱՐ. Մի բոպէ խնդրեմ սպասեցէք:

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Խ.

ՆՈՅՆԻ և ՄԱՐԻԱՄ (աղբայիշ)

ՆԱԽԱՐԱՐ. (Շերս ճոնոց աղախինքն) Խանումը տանն է:
ՄԱՐԻԱՄ Ոչ դնաց...

ՆԱԽԱՐԱՐ. Ոչ ոքի չընդունել. ասա որ տանը չեմ.
ՄԱՐԻԱՄ Ճատ բարի (Շռարս է գնում):

ՆԱԽԱՐԱՐ. (պիկն չեփմեանի առաջը իւրելով, ելք առ գնում է դեղի ուսուելը) Սպասէցէք, Աննա Գավրիլովնայ, աղաջում եմ, մի դնաք, մուացէք մի բոպէ որ դուք իմ թշնամին էք:

Տիկ. Հիքիլ. Զեր թշնամին. ինչ իրաւունքով էք դուք ինձ այդպէս անուանում:

ՆԱԽԱՐԱՐ. Նստեցէք, խնդրեմ, և ես այս բոպէիս իմ ասածս հաստատեմ. (առաջորդում է առաջը, բայց պիկնը առաջում է) խնդրեմ հրամացէցք. ձեզ համար, կարծիմ, ոչինչ չարժէ շնորհել ինձ քանի մի բոպէ...

Տիկ. Հիքիլ. Բայց ինչպէս շնորհել ձեզ քանի մի բոպէ—օրպէս ձեր թշնամի, թէ օրպէս ձեր սիրահար:

ՆԱԽԱՐ. Ոչ այս և ոչ այն. լոկ շնորհ արէք ինձ փոքր ինչ ձեզ հետ զրոյց անելու. խնդրում եմ:

Տիկ. Հիքիլ. (առաջում է առաջում է) Մի ասացէք, խնդրեմ, ինչու դուք ինձ ձեր թշնամի էք համարում:

ՆԱԽԱՐԱՐ. (Տար առշաբանը) Այն, դուք իմ թըշ-

Նամին էք և այն էլ իմ բոլոր թշնամիներից ամենավտանգաւորը: Վտանգաւոր էք, որովհետեւ դուք կին էք, իսկ կին թշնամի ունենալը մի և նոյն է թէ մի բարակ չուանի վրայ կախած լինի մարդ խորը անդունդում և բոպէ բոպէ սպասում լինի իւր կործանումը: Իսկ երբ որ այդ կինն էլ...

Տիկ. Հիքիլ. (Ըստ հասկելով) Ուզում էք ասել՝ իլ է ամէն տեսակ պակասութիւններով:

ՆԱԽԱՐԱՐ. Ոչ թէ պակասութիւններով, այլ երբ այդ կինը ձեզ նման խելօք է, հեռատես և հրապուրիչ է—ահա այն ժամանակը կրկնապատկվում է մարդուս վտանգը: Սակայն, գիտէք տիկին, ինձ համար աւելի սիրելի է որ դուք ինձ միշտ ատէք, քան թէ անտարբեր գտնուիք դէպ ինձ: Զեր ատելով՝ դուք գոնէ լիշում էք ինձ: Ես այդ բանին աւելի ուրախ կը լինիմ, քան թէ բոլորովին նոռացման տայիք ինձ: Մեր ծանօթութեան սկզբից ես շուարուած մնացի, երբ այսպիսի լետ ընկած գաւառում բաղդ ունեցայ պատահել ձեզ պէս մի շնորհալի տիկնոջ, մինչդեռ դուք, ուղիղն ասեմ, զարդ պիտի լինիք աւելի ընտիր հասարակութեան: Պուր այստեղ, գիտէք, ինչ բանի կը նմանիք—երևակայեցէք մի ամայի գաշտում խոտերի կամ վայրենի ծաղիկների մէջ փայլում լինի մի պատուական, սիրուն վարդ....

Տիկ. Հիքիլ. Միշտ գաւառի մէջ բնակուելով, մեր ականջը ի հարկ է սովոր չէ այդպիսի փաղաք-

շական խօսքեր լսելու և ձեր առաջներից, ես ճըշ-
մարիտը խոստովանիմ, շփոթվում եմ...

ՆԱԽԱՐԱՐ. Տեսէք, թէ որքան չար էք: Դուք
ուզում էք ինձ ոչնչացնել, տիկին, ընդունելով իմ
ասածներս ոչ թէ իբրև իմ սրտի զգացմանց արտա-
յալտութիւն, այլ իբրև լոկ քաղաքավարական խօսքեր:

ՏԻԿ. ՀԵԲԻՄ. Իսկ դուք էլ կամենում էք մի
ըոսէի մէջ ինձ զինաթափ անել և բոլորովին նուա-
ճել, թէ և ես ձեր ամենաօխերիմ թշնամին լինէի,
այնպէս չէ:

ՆԱԽԱՐԱՐ. Ձեր անձնատուր լինելը ինձ բոլո-
րովին կը երջանկացնէր....

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Տ Խ. XI.

ՆՈՅՆՔ և ՏԻԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԵԸՆ.

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. (Քշին Շահնշահ Քշին Շահնշահ) Անսա Գավթիօվնանի... ինչու էք այս սենեակում նրս-
տել. ինդրեմ հրամակեցէք, երթանք դահլիճը: (ամուսունակ) Նորութիւն գիտես. յայտարարութիւններ
են կացրել պատերին, որ իբր մենք փախչում ենք
այստեղից...

ՆԱԽԱՐԱՐ. (Շահնշահ) Ահա ունիմ օրինակը
(յոյն պաշտ):

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Ասացէք, ինդրեմ, ինչ կը նշա-
նակէ այս. ովէ է այդ անողը, մենք մումն ենք վնաս

տուել...: Դուք, իհարկ է, կարգացել էք տիկին:

ՏԻԿ. ՀԵԲԻՄ. Երևակայեցէք, ես այնքան հա-
ւատ ընծակեցի այդ լուրերին, որ շտապեցի դալ
տեղեկանալու:

ՆԱԽԱՐԱՐ. Եթէ այդ լուրը չինէր, տիկինը
դուցէ չը պատուէր մեղ այսօր իւր այցելութեամբ:
Այս, կարծեմ, երկրորդ անգամն է որ դուք մեղ
մտաբերում էք:

ՏԻԿ. ՀԵԲԻՄ. Սխալվում էք, Նիկոլայ Խւանիչ:
Ես միշտ ձեզ լիշում եմ և այժմ շատ ուրախ եմ, որ
դուք ոչ մի տեղ չէք գնալու: Նա մանաւանդ, որ
ինչպէս ձեզ յայտնի է, ես վաղուց ցանկանում էի
ձեզ մօտ բժշկուիլ, գիտէք, զղերիս գրգռումն և շա-
րունակ անքնութիւնս ինձ շատ տանջում են: Թէ
և իմ ամուսինն էլ բժիշկ է, բայց, որպէս յայտնի
է, կանալք սովորաբար իւրեանց մարդկանց բժշկու-
թեանը չեն դիմում:

ՆԱԽԱՐԱՐ. (Գլուխ պաշտ) ՈՒշտ պատրաստ եմ
ծառայելու:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Իսկ եթէ ես լինէի տկար, ու-
ղիղն ասեմ, աւելի լաւ կը համարէի իմ մարդուց բժշկուիլ, քան թէ ուրիշներին դիմել:

ՏԻԿ. ՀԵԲԻՄ. (Քծու) Վոռանում էք, տիկին, որ
ձեր ամուսինը մի առանձին բացառութիւն է. ցտե-
սութիւն (չետք պալով ունինչը, իսէ նախարարեանին ժըպ-
տաշտ): Ես հիմայ զինաթափ եղայ ձեր առաջը, այն-
պէս չէ (ողելով չետք բռնը է գնում, նախարարեանը

Հետաքաշությունը և առաջարկը մեջնավայրությունը եւ այլ ժամանակակից պահանջությունները ():

Տիկ. ՆԱԽԱԲԻ. (Գլխարկէլ առնելով, Քնարէ) Զէ, սուրան իմ ամուսինը չպէտք է բժշկէ: Մինչեւ անգամ իմ ներկայութեամբ համարձակուեց ասել թէ զինաթափ է լինում: Պարզ է, որ արդէն մարդուս մոլորացրել է, զլխից հանել է և չէ ամաչում, գալիս է տունս, առանց պատկառանքի յայտնում, որ իւրեան յաղթուած է համարում, այն էլ... այն էլ իմ աչքի առաջ: Սորանից էլ աւելի յանդգնութիւն:

T E T R O D Y S T . XII.

ՏԻԿ. ՆԱԽԾՐԱՐԵԱՆ, ՆԱԽԱՐԱՐԵԱՆ և ՍԻՐԵԿԱՆ
ԱՂԱՅ (Քառին հարստացվ.)

ՍԻՐԵԿԱՆ (ուղարկ դեմքով և տարածով չեղաւելով
շատապում է դեղի ռաստիկինը) Ելենայ Պաւլովնայ, իմ
հրեշտակս, իմ թանկագին գոհարս (պաշտմ և չեղաւը):

Տիկ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆ. Ա՛լս, Սիրեկան աղայ, չ'զե-
տէք թէ որքան վրդովուած եմ...

ՍԻՐԵԿԱՆ: Ի՞նչ պատճառաւ իմ աչքի լոյս...

Տես. Ալլավոր. Պուր ոտինչ չէք լսել...

Ապօպան ճնշել:

Տիկ. ՆՈԽԱՐ. Այս զիշեր պատերի վրայ թղթեր
են կպցրել, որ իբր թէ մենք դնում ենք և շտապ

Ճակտում ենք մեր իրեղենները: Կարդացէք ահա (պաշտում է յայտաբարութեանը):

ՍիրԵԿԱՆ. Ի՞նչ... անկարելի բան է...: Յոյց
տուէք խնդրեմ (ահնոյները հանելով և չարտարվ) Հըմ...
այ անիրաւներ... աս փշութիւն չէ մի... կարելի
բան է ասանկ լրբութիւն: Արդեօք նրուն արածն է...

Տիկ: ՆԱԽԱՐԱՐ. Ի հարկէ պարոն չէքիմեանի և
իւր սիրուն տիկնոջ, որ այս ըստէիս էլ այստեղ էր
և եկել էր տեսմնելու թէ ինչ ազդեցութիւն ունեցաւ
մեզ վրայ իւր գեղեցիկ արարմունքը...

ՍԻՐԵԿԱՆ. Իրաւ, աս ըստիս պատահեցի անոր ձեր վարի դռանը և, ճշմարիտն ասեմ, շատ ալ զարմացաւ: Ասոր համար եկել էր, հրմ, հիմայ հասկացաւ:

ՏԵԿ. ՆԱԽԱԾ. ՏԵԿԻՆ ՀԵքիմեանը մի ուրիշ կարեոր զործ էլ ունէր յատկապէս մարդու մօտ (հայ-
ւահ է ամառաւոյ գրաց բառու ժողովով):

ՍԻՐԵԿԱՆ: Ի՞նչ պործ աչքի լու:

ՏԵԿ. ԽԱԽՈՅ. Թող ինքը բաղադրէ:

ՆԱԽԱՐԱՐ. Ի՞նչ տարօրինակ ձեռվ ես խօսում,
Հեղինէ: Գալու նպատակը շատ պարզ է, տիկին Հէ-
քիսեանը զանկանում է ինձ մօտ բժշկուի:

**Տիկ. ՆԱԽԱՐ. Լսում էք, Սիրեկան աղայ, նա
ցանկանում է ամուսնուս մօտ բժշկուի:**

Սիրեկան. (Եղիշև իրան) Որոգալիթը շատ աղեկ է լարուած. (ակնազմ) Նեկոլայ Խվանիչը այնպիսի քաջ բժիշկ է, որ տիկին Հեքիմեանի ցանկութիւնը, աչքիս լուս, շատ հասկանալի է:

Տիկ. ՆԱԽԱՐԱ. Այդ է ցաւը որ շատ հասկանալի է:

ՍԻՐԵԿԱՆ. Գիտէք աչքիս լրա, չէքիմեանը ինքը թէև շատ պատուական մարդ է, բայց բոլորովին թուլացել, ընկել է, նա մանաւանդ որպէս բժիշկ: (Նախարարէանին) Զէք կարող երևակացել, աղաս, թէ ինչ ձեւ բժշկութիւն կընէ. անոր սիրածը լուծողականն է ու եախուն. պէտք է, պէտք չէ՝ եախու կպցուր. ամէնիս կաշին ալ փրցուց: Քաելու զեղեր կուտայ, քաղցր վարդաջուրեր կը խցունէ, ասանկ երեխայական բաներ. ՀԷ, ՀԷ, ՀԷ: Հրամանքներդ երբ եկաք, գեղագործ Ագօլֆը ապշած մնաց. Ճեր պատուերները կատարելու համար խեղճը ոչ աս ունէր, ոչ ան. շատ գեղօրէից անուններն ալ առաջին անգամը կը լսէր: «Ահա սա, կըսէր Ագօլֆը, սա էսկ և իսկ բժիշկ է, կատարեալ գիտնական. չէքիմեանին չի նմանիր»: Խեղճ մարդը վազեց գնաց Թիֆլիս նոր գեղօրայք առնելու և քիչ մալ բան սովորելու... ՀԷ, ՀԷ, ՀԷ: Ուրեմն, տիկին չէքիմեանը Ճեր քովը պիտի բժշկուի: Ջատ աղէկ: ի՞ւ: Կարծեմ թէ իր ամուսինը չ'պիտի արգելէ...

Տիկ. ՆԱԽԱՐԱ. Բայց ես պիտի արգելեմ:

ՆԱԽԱՐԱ. Չեղինէ, Ճեռք վեր տա, խնդրեմ, դատարկ բաներ ասելուց:

Տիկ. ՆԱԽԱՐԱ. Դու ինչու ես նորան պաշտպանում:

ՆԱԽԱՐԱ. Նորան պաշտպաննելը այն ժամանակ հարկ կը լինէր, եթէ քոյ մեղադրանքը փոքր ի շատէ իրաւացի լինէր. իսկ մեղադրել տիկին չէքիմ-

եանին լոկ այն պատճառաւ, որ նա ցանկանում է ինձ մօտ բժշկութիւն— այդ զրպարտութիւն է, ուրիշ ռջինչ:

ՍԻՐԵԿԱՆ. Տիկին չէքիմեանը գուցէ իր պատճառներն ունէ...

Տիկ. ՆԱԽԱՐԱ. (ԸՆԴՀԱՄԵԼՄ) Ի՞նչ պատճառներ կարող է ունենալ: Պատճառներ, իհարկ է, շատ և շատ կը զտնուին մի այնպիսի կնոջ համար, որ իւրեան նողատակ է ընտրել տարփածուներ ժողովել, որ չ'գիտէ իւրեան պահել: (Ամառնուն) Դու միթէ լաւ կարծիքի ես նորա մասին:

ՆԱԽԱՐԱ. Ես ոչինչ կարծիք չեմ ուզում յալտնել, որովհետև դու շատ աւելորդ բաներ ես ասում:

Տիկ. ՆԱԽԱՐԱ. Սիրեկան աղայ, դուք գատեցէք, խնդրեմ, միթէ ասածներս ուղիղ չեն: Միթէ օրինաւոր կինը հասարակութեան մէջ իւրեան տինպէս կը պահէ, որպէս նա է պահում: Նրա այն ձեւը, այն բարձր ծիծաղը, այն երկմտանի սրախօսութիւնները... իսկ հագուստը... ուշադրութիւն դարձել էք, որքան անճաշակ, անվայել...

ՍԻՐԵԿԱՆ. Ագ մասին ալ, աչքիս լոյս, դուք աննման էք և օրինակելի: Դուք քաղաքիս կանանց զարդն էք: Օրհնուի ծնունդդ, հրեշտակդ իմ: Հագուստիդ պարզութենէն ու ճաշակէն իսկոյն կիմացտիթէ ինչ պատուական գերգաստանի զաւակ էք: (Հէր է առաջարկ յայտաբարութիւնը և կոչք ինչ հառծելուց)

Ճէպոյ) Ես դարձեալ չեմ հասկանար թէ որուն արածն է այս խալիտառակութիւնը:

Տիկ. ՆԱԽԱՐ. ԻՀԱՐԻ է ՀԵՔԻՄԵԱՆԻ...

ՍիրեկԱն. Զեմ կարծեր: Սակայն, ավ զիտէ,
նախանձէն ամէն չարիք սպասելու է: Միթէ առանկ
զործ անոր կը վայելէր... չեմ կարծեր նա եղնի:
Խոկ եթէ ձեր կարծիքը իրաւ է, սաստիկ վրէժինդ-
րութեան արժանի է...

Տիկ. ՆԱԽՆՅ. Ամուսինս ՀԵՐՔԻՄԵԱՆԻց չարաչար վրէժ առնելու միջոցը ահա գտել է. սա կամբենում է նորա կնոջը բժշկել, հայ, հայ, հայ...:

ՆԱԽԱՐԱՐ. ՀԵՂԻՆՔ...

**ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Տիկին Հեքիմեանը արդէն իմ
առաջը յայտնեց, որ «զինաթափ է եղել և նուաճուել»,
իսկ հիմա երբ կսկսի բժշկուի Նիկողայոսի ձեռքով...**

ՆԱԽԱՐԱՐ. (Խորառականք բարեհաջող) ԽՆԴՐԵՄ
դադարել...

Տիկ. ՆԱԽՈՒԹ. (աւշալ վեր Առաջնորդ) Խակ ես վրձ-
ռական կերպիւ յայտնում եմ, որ կը սպանեմ ինձ,
բայց չեմ թողնիլ որ դու նորան բժշկես, լսեցիք
(շատապ բռնու և գնում):

ԵՐԵՎԱՆԻ Խ. XIII.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ և ՍԻՐԵԿԱՆ ԱՂԱՅ

ՍԻՐԵԿԱՆ. (ինչև երան) Աս ալ գէշ չէր: (Նախո-
րարեւանին իսկ իսկը եղութեամբ) Ելենայ Պավլովնան ասօր
բ՞նչու ասանկ...

ՆԱԽԵՆԻ ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. (անհայտելիութեամբ ըստ հայութեամի) Գիշեմ...:
Կանացի անտեղի կասկածներ: Երբեմն զղալին զըր-
դուռմը այնպէս սաստկանում է, որ ինքն էլ չը գի-
տէ թէ ինչ է ասում: Մօրիցն է ժառանգաբար ան-
գել, թէ ինչ է, չգիտեմ:

ՍԻՐԵԿԱՆ. Զեղ նման օրինակելի ամուսինները
թանկ պիտի գին գրուին....:

ՆԱԽԱՐԱՐ. Յոյս ունիմ, Ալբեկան աղայ, որ ձեր
ախտեղ լսածները մեր մէջ կը մնան:

ՍԻՐԵԿԱՆ. Կը կասկածիք միթէ, պաշտելիդ իմ նիկոլայ Խվանչիք։ Հետս զերեղման կը տանհեմ…:

ՆԱԽԱՐԱՐ. Ի հարկէ, այս բոլորը տեղիք չէր ունենալ, եթէ այդ խայտառակ յայտարարութիւնը չլինէր (*չ-առաջարկ չուրիման է ուշանեց վրայ ուստի յայտարարութեանը*):

ՍԻՐԵԿԱՆ. (ՀԱՇՎԱՅԻՆԴ) Ի հարկէ խայտառակութիւնն է...

ՆԱԽԱԲՈՅ. Այդ մի լըբութիւն է և ստոր վար-
մունք:

ՍԻՐԵԿԱՆ. Բոլորովին ձիշդ է: Ես ըլլակի, վրէժս

անանկ կառնէի, որ յաւիտեան չըմոռացուէր: Ահա այսպիսի դէպերումն է, որ գործ պիտի դնուի «ալն ընդ ականը»: Թու, կըսէի, կուզես ինձ վախցունել և կը հռչակես թէ տանուս իրեղէնները կը ծախեմ. շատ աղէկ. դու ալ, կըսէի, խելագարուել ես և դպեթաների մէջ ալ կը հրատարակէի...

ՆԱԽՈՒՐԱՅԻ. (Հայութաբելով) Խելագարուել...

ՄԻՐԵԿԱՆ. Սպա ի՞նչ. խելքը գլխուն մարդը հէջ ատանկ բան կը բռնէ: Ցնորուել ես, կսէի, գժանոցի պէտք ունիս: Նայինք, իրեն գտրեկան կեղնի, երբ ամենքն ալ գաղէթան կարդան, գան երեսը նայելու և մտքէն ըսեն թէ «ափսոս մարդ, որ ասանկ եղաւ»:

ՆԱԽՈՒՐԱՅԻ. Հա, հա, հա: Թուք շատ որամիտ մարդ էք Միրեկան աղայ:

ՄԻՐԵԿԱՆ. Ես, աչքի լոյս, վափուկ, զգայուն սիրո ունիմ: Ասանկ բաներէն ես շատ կը վշտանամ. բայց ամենէն աղէկն է, իհարկէ, թքնէք վրան ու հէջ ուշագրութեան չարժանացնէք... Ես ձեր քովը, աղաս, կարեոր խնդիրք մը ունիմ...:

ՆԱԽՈՒՐԱՅԻ. Հրամայեցէք:

ՄԻՐԵԿԱՆ. Քաւ լիցի—հրամալեմ: Սա ձախ կողքս կը ծակէ միշտ, կը վախնամ թէ ներսէն աւրուած չլինի...

ՆԱԽՈՒՐԱՅԻ. Պատրաստ եմ կարեցածիս չափ օգնելու: Հրամայեցէք, գնանք իմ սենեակը, որ նայեմ (Քու սէնեակից իսնոցի աշականինք են լւշ-մ): Այս ինչ ձայներ են...

ՄԻՐԵԿԱՆ. Կարծեմ խանումն է...
ՆԱԽՈՒՐԱՅԻ. Դարձեալ խտերիկայի... ախ... ներեցէք, այս բոլէիս կը վերադառնամ (Հայութ է հնոցը սէնեակիը):

ԵՐԵՒԱՅԹ XIV.

ՄԻՐԵԿԱՆ ԱԳԱՆ (Քայով)

ՄԻՐԵԿԱՆ. (Հետքերը ճիրէլով) Հէ, Հէ, Հէ: Զէի կարծեր թէ գործը ասանկ յաջող երթալ... Աս միամիտները հէջ չեն հասկանար, որ կռուացնելուս միտքը՝ եղբօրս որդուն—Գրիգորին համար տեղ բանալն է: Զէ որ աս ամառ մեր Գրիգորն ալ գեօխտուր պիտի աւարտէ: Է՞յ, երեք բժիշկ շատ կեղնի: Անանկ անելու է որ աս երկուսէն մէկը շուտով քաշուի, հեռանալ աս տեղէն: Գործէն կը տեսնամ, որ մտադրութիւնս յաջողելուն վրայ է: Հարիֆները անանկ տաք տաք կպեր, մէկզմէկու միս կուտեն, որ վախնամ թէ երկուսն ալ չը փախչին: Ինչ և լցէ, Գրիգորին աս գիշեր զրելու է, որ անհոգ եղնի և շտապի գայ...: Է՞յ, Հէի... Մարդարէն կըսէ թէ....

ՎԵՐԱԳՈՅՔ:

ՀԵՔԻՄ. Բայց նոքա չէ թէ խօսքով են ասել,
այլ տպել են, տպել (լրտերը չեւ-չեն շարժելով) և աշ-
խարհքէ աշխարհք տարածել:

ՍԵՐՈԲ. Անկարելի բան է:

ՀԵՔԻՄ. (Ըստհատելով) Դարձեալ ասում է ան-
կարելի է: Թէ որ անկարելի է, ապա այս ինչ է
(հարդար է լրտերը)... «Այժմ եղանակները օր ըստ օրէ
լաւանում են...: Թէ և կարկուտը այս տարի մեզ
ես»... Հըմ, ահա «Վերջացնելով թղթակցութիւնս,
մի ցաւալի լուր ես ունիմ հաղորդելու... մեր քա-
ղաքի հինաւուրց բժիշկ պատուելի պ. Հ...., այսինքն
պէտք է կարդալ Հեքիմեանը, որ ամենից յարգուած
մի անձնաւորութիւն է, նորերումս խելագարութեան
նշաններ է ցոյց տալիս. Խեղճի զրութիւնը հետզհե-
տէ ծանրանում է և նա կարօտ է օրինաւոր բժշ-
կութեան»...: Հիմայ իմացար, տեսար ինչ են տպել,
եբր թէ ես խելագարութեան նշաններ... Հըմ...

ՍԵՐՈԲ. Թքնէ վրան, ատոր զրողի հարն ալ
անիծեմ....:

ՀԵՔԻՄ. Անիծես, չանիծես, իսկ զրողը գրել է
և տպել.... «Խելագարութեան նշաններ»... Հըմ,
լաւ չէ....

ՍԵՐՈԲ. Ես վրատ ատանկ բան դըհայ չեմ
տեսներ....:

ՀԵՔԻՄ. Այդ էր պակաս, որ գուն էլ տեսնէիր:
Գնա՞ գործիդ:

ՍԵՐՈԲ. (Հաճայ իաճայ ուռներին հօդէնալով) Կը լլայ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Քիշկ Հեքիմեանի տանը, առաջին գործութեան
տեսարանը.

ԵՐԵՒՈՅԹ I.

ՀԵՔԻՄԵԱՆ և ՍԵՐՈԲ (որ իտուի է բերում և հայտնու-
ակնեաւում):

ՀԵՔԻՄԵԱՆ. (Խաղալով և հողալայնելով) Կ'սպա-
նեն ինձ, կըսպանեն....

ՍԵՐՈԲ. Վեզ է քեզի սպանողը, աղաս....

ՀԵՔԻՄ. Ես չեմ դիմանար:

ՍԵՐՈԲ. Հէք, դու քէֆդ քեօք պահէ:

ՀԵՔԻՄ. Ամբողջ աշխարքում խելագարուած
հոչակեցին....:

ՍԵՐՈԲ. Վեզ կը համարձակի:

ՀԵՔԻՄ. Ի՞նչ գիտեմ ով, անամօժ, անխիղճ
լրբերը:

ՍԵՐՈԲ. Մի հաւատար, աղաս: Օրինակին հա-
մար՝ հարիֆին մէկը ելլայ ըսէ ինձի՝ «Սերոբ, դու
յիմար ես», հէջ կը հաւատամ ես անոր ըսածին:

որ հարիֆին զրածը շիտակ եղնի, վեզ զիտէ (Դաւթան է գոռամ յետ ու յետ նայելով):

Հեթիթ. (Խառաջ մասելով մաս է գալիս) Ի՞նչու են ինձ այսպէս խայտառակում, ումն ինչ եմ արել.... Ի՞նչ կասեն հեռաւոր բարեկամներս... Ո՞ր մէկին ես հաւատացնեմ թէ խելագարուած չեմ... Ամբողջ զիշերը չեմ քնել մտածելուց, բաց պատուհանի առաջ լուսացրի...: Ա՞յ, այ, ի՞նչպէս մրսացրել եմ վիզս (Կառաւ դժունով չետքերով շշակում է վեր)...այ... չէ ես չեմ դիմանալ, ես կը հիւանդանամ... (Գոռամ է իւր սէնեալը):

ԵՐԵՒՈՅԹ II.

ՄԻՋՆՈՐԴԵԸՆ

ՄԻՋՆՈՐԴԵԸՆ (Դաւթան մասելով միջն դըն դէրեց) Ոչ ոք չկայ արտեղ: Ո՞րքան ստոր, անվայել բան է...: Միթէ լրազրութիւնը նորա համար է, որ չար մարդիկ իւրեանց կրքերը յազեցնեն... Բայց լրազիրը ի՞նչ մեղաւոր է. հեռուից զրել են, նա էլ ոչինչ միջոց չունենալով վերաստուգելու, հաւատացել է. թղթակցին և տպել... ի՞նչ զիտէ՝ սուտ է թէ ճշմարիտ... Գույ զրողին ասա... Չե ես պիտի գտնեմ այդ անխիղճ հեղինակին և նոյն լրազրութեան մէջ խայտառակեմ...:

ԵՐԵՒՈՅԹ III.

ՄԻՋՆՈՐԴԵԸՆ և ՏԻԿԻՆ ՀԵԹԻՄԵԸՆ

Տիկ. Հեթիթմեծն. (Կեր գործվ և յետ ու լույշ) Կարդացիք:

ՄԻՋՆՈՐԴԵԸՆ. Այս, տիկին, կարդացի և շատ վրդովուած եմ, որ այդպիսի տղեղ երկոյթները մեր քաղաքում...

Տիկ. Հեթիթ. (Ըստհանության) Հիմայ տեսաք թէ ձեր դոված պ. Նախարարեանը ի՞նչ ընդունակութիւններ ունէ... .

ՄԻՋՆՈՐԴ. Այս, տիկին, այդպէս չի կարելի: Նախ պէտք է ճիշգը իմանալ, հաստատել և ապա մատնացուց անել...

Տիկ. Հեթիթ. Դարձեալ պաշտպանութիւն: Որ հաղար ասէք զրողը Նախարարեանն է և իւր սիրուն կնիկը...

ՄԻՋՆՈՐԴ. Առանց պարզ ապացուցի միշտ կարելի է սխալուիլ: Օրինակ՝ անցեալ շաբաթ, երբ Նախարարեանի մասին այն յայտարարութիւնը տարածուեցաւ, ամէնքն էլ պնդում էին, որ իբր թէ գըրողը գուք էք: Ես չհաւատացի և իրաւունք էլ չունիմ հաւատալու առանց փաստի...: Այսպիսի զըրպարտութիւններով միայն զրգուվում են կրքերը:

Տիկ. Հեթիթ. Մենք, ի հարկ է, մեր մէջն ենք խօսում... Ես մինչև անգամ կարծում եմ, որ մի

ուրիշ անձնաւորութիւն պիտի լինի Նախարարեանին
խորհուրդ տուող... չեմ հասկանում միայն թէ այդ
խառնակիչի նպատակը և շահը ինչ է...

ՄԻՔՆՈՐԴ. Ահա ես էլ այդ խառնակիչի ետ-
ևիցն եմ ընկած և լոյս ունիմ որ գտնեմ:

ԵՐԵՒՈՅԹ IV.

ՆՈՅՆԻ և ՍԻՐԵԿԱՆ ԱՂԱՅ

ՍԻՐԵԿԱՆ. (Ներս հոնելով յետ-էրը տարածած հոգենում
է այնողը) Անսա Գավրիլօվնա, հրեշտակդ իմ (հոմ-
քուրելով յետ-էրը): Բարե աղաս (ստուռաբեամբ յետ-էր
նում է Միջնորդ-անին):

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Կարդացիք Սիրեկան աղայ:

ՍԻՐԵԿԱՆ. Ալ զլուխս կորցուցել եմ, բերանս
խօսք չի գար. ատմանկ բան... դժոխից արմատը...

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Սիրեկան աղայ, գնացէք, խընդ-
րեմ, ամուսնուս սենեկալը, նա այնտեղ է, փոքր ինչ
միսիթարեցիք: Երեկոյեան, երբ կարդաց՝ այնպէս
դարձաւ, որ ես կարծեցի թէ իջուածք կստանայ:
Ամբողջ գիշերը բաց պատուհանի առաջը նստած
անցկացրեց. նայում էր մսւթի մէջ, կասես թէ մի
բան էր տեսնում ու իրան իրան խօսում էր:

ՍԻՐԵԿԱՆ. Տէ՛ր Աստուած....:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Գուշք միայն կարող էք նորան
հանգստացնել, գնացէք խնդրեմ (Սիրեկան աշոն հոգենում
է չեռիթեանի անետէրը):

ԵՐԵՒՈՅԹ V.

ՏԻԿԻՆ ՀԵՔԻՄԵԱՆ և ՄԻՔՆՈՐԴԵԱՆ

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ճարունակենք մեր խօսակցութիւ-
նը... Ով կուզէ լինի այդ խառնակիչը, բայց Նախա-
րարեանը չի կարող արդարանալ, մանաւանդ իմ ա-
ռաջ:

ՄԻՔՆՈՐԴ. Հաւատացէք, տիկին, որ ձեր մասին
նա միշտ յարգանքով է խօսում:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. (Համայ նորհրդաբար) Ասացէք, խըն-
դրեմ, ձեզ իմ մասին ինչ է ասել...

ՄԻՔՆՈՐԴ. Բացի ընդհանուր գովասանքներից
առանձին ոչինչ:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Իսկ կի՞նք:

ՄԻՔՆՈՐԴ. Նմանապէս ոչինչ:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Կինը մարդուց գանդատաւոր չէ...

ՄԻՔՆՈՐԴ. Ի՞նչու մասին:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Այնպէս, առ հասարակ:

ՄԻՔՆՈՐԴ. Զգիտեմ, ինձ մօտ չէ գանգատուած:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Բայց շատ նախանձու է, այն-
պէս չէ...

ՄԻՔՆՈՐԴ. Այդ էլ չգիտեմ, իսկ եթէ նախան-
ձու էլ լինի՝ զարմանալու բան չէ, քանի որ ինքն
էլ, ամուսինն էլ երիտասարդ են:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Հաշտ են ապրում:

ՄԻՔՆՈՐ. Տիկին, դուք ինձ տարօրինակ հար-

ցեր էք առաջարկում: Նոքա ընդամէնը մի ամիս
կամ ամիսուկէս է որ այստեղ են. միթէ այդ կարձ
միջոցում կ'ներեն իւրեանց ցոյց տալ մեզ իւրեանց
ներքին յարաբերութիւնները::

Տիկ. Հեթիվ. Խնդրեմ, իմ կողմից ոչինչ չառէք
Նախարարեանին:

Միջնորդ. (Կէշայած) Տիկին, թէև իմ աղքա-
նունս իրաւ Միջնորդեան է, բայց ես տանել բերե-
լով երեք չեմ պարապած, կը ներէք: (Վէր հէնալ) Յունութիւն (չեռած առաջնորդ է գնում):

Տիկ. Հեթիվ. Ի՞նչպէս իմանամ ես թէ Նախա-
րարեանը կեղծում է ինձ և խարում, թէ, վերջապէս,
նորա սրտումը իրաւ սիրոյ կայծ կայ: Սովորաբար,
երիտասարդական հասակում տղամարդիկ սիրում են
պարծենալ և չեն թաքցնում իւրեանց գաղտնիքը
մտերիմներէց: Ես կարծեցի թէ նա զոնէ Միջնոր-
դեանին մի բան ասած կը լինէր, բայց սա էլ այն-
պիսի մի սառը և անտարբեր մարդ է, որ կարծես
վարդապետացու լինի պատրաստվում. «Ճիշտեմից»
աւել բան չգիտէ (գնում է ի-ը սկզբանէ):

ԵՐԵՒԱՅԹ VI.

Հեթիվեան և Սիրեկան ԱլԱՅ (Դաստիարակութիւն գույն)

Սիրեկ. Ուհա ալդպիսի բաներ: Նախարարեանը
դեռ կը շարունակէ իւր այցելութիւնները ձեզ...

Հեթիվ. Յանդգնաբար երկու երեք անդամ եկած
է այս շաբաթ: Ես տանը չեմ եղել:

Սիրեկ. Ի՞նչ նպատակով կուգայ:

Հեթիվ. Սատանան գիտէ. լիրը մարդուն մէկ
դռներից դուրս անես, միւս դռներից կը մտնի:

Սիրեկ. Հասկցցայ. Երեխ Աննա Գավրիլօվնալին
բժշկելու համար կուգայ...:

Հեթիվ. Ի՞նչպես. Նախարարեանը կնոջս, բժշ-
կէլ...: Ներեցէք, Սիրեկան Աղայ, հիմայ իրաւ կամ
ես եմ խելագարուել, կամ դուք բոլորեքեանքդ: Այս-
պիսի բաներ էք ասում, որ մարդ ունեցած խելքն
էլ կը կորցնէ... (զարմացած նայում է հնոջ վրայ, որ այդ
միջնորդ ներս է գույն):

ԵՐԵՒԱՅԹ VII.

ՆՈՅՆԲ և ՏԻԿԻՆ ՀԵԹԻՎԵԱՆ

Տիկ. Հեթիվ. Ի՞նչ ես այդպէս նայում վրաս:

Հեթիվ. Դու... դու բժշկվում ես Նախարա-
րեանցի ձեռքով:

Տիկ. Հեթիվ. (Առաջնորդ նայելով Սիրեկունի վրայ)
Այն, ես նորանից խորհուրդ հարցըի:

Հեթիվ: Դու...

Սիրեկ. Մի բարկանար, աղաս, մի բարկանար,
առ վնաս է հրամանոցդ առողջութեան համար: Հաւ-
ատացած եղեր, որ եթէ Աննա Գավրիլօվնան հարկ

Է Համարել Նախարարեանին խորհուրդի դիմելու,
երևի կիմնաւոր պատճառներ է ունեցեր:

Տիկ. ՀիքիՄ. Ի Հարկէ, ունիմ իմ պատճառ-
ները:

ՀիքիՄ. Գիտէք ինչ է. գուք իրաւ որ ինձ ցնոր-
մունքի կը հասցնէք: (Զայրութով) Ամէն բան կը սպա-
սէի, բայց սիրելի կնօշից այդպիսի խայտառակու-
թիւն չէի սպասիլ: Ճնորհակալեմ, տիկին, շատ շնոր-
հակալ եմ....

ՍիրԵԿ. Հարկ չկայ բարկանալու, աղաս, պէտք
է հանդարտութեամբ լսել պատճառները....:

Տիկ. ՀիքիՄ. Թողէք որքան կամի բարկանայ,
գոռայ, թողէք....:

ՀիքիՄ. Իմ թշնամիս, իմ ատած մարդս, որ
պատրաստ է արիւնս ծծել, որ ոչինչ միջոց չէ խնայ-
ում ինձ վայրգցելու, որ լրագիրներում հրատարա-
կում է թէ ես խելագարուել եմ....

ՍիրԵԿ. (Ծարհութեր) Նայինք՝ ատոր գըողը մն
է....:

ՀիքիՄ. Ապա ես եմ... Ի Հարկէ նա է: Օրը կէս-
օրին քաղաքի հրապարակը դուս կ'գամ և կ'գոռամ, որ
գըողը նախարարեանն է, նախարարեանն է, իմացաք:

ՍիրԵԿ. Առ չեղաւ....:

ՀիքիՄ. «Չեղաւ», իսկ նորա արածները ոչինչ...
Եւ այդ տունս քանդող, ոխերիմ թշնամուս մօտ
բժշկում է—ով, իմ կինս: Իմ կինս... Գորանից էլ
առաւել ինչ կարող է լինել....:

Տիկ. ՀիքիՄ. Դու վերջացրիր. հիմայ լսեր ինձ:
ՀիքիՄ. (Հրապիտ) Լուիր:

Տիկ. ՀիքիՄ. (Հեր Առշեւրլ առելից) Եթէ դուք
պիտի գոռաք փողոցի կինտօվի նման (Քնում է ու ունի
բարեւը):

ՍիրԵԿ. (Վրայ վազէլով ու գէլում է) Աղաչեմ, հո-
գիս, աչքիս լոյս, մի վշտանաք, ՚ի սէր Աստուծոյ
(Պաշշամ է չեւուք): Ի՞նչ օգուտ ատանկ զուր վէճերէն:
Ես ձեզ այնքան կ'սիրեմ և կը պաշտեմ, որ չիմ ու-
զեր գերեզման չիջած՝ ձեր մէջ որ և է անբաւակա-
նութեան վկայ եղնիմ: (Հետեւանին) Դուք ալ, աղաս,
ըս պիտի ատանկ զալրանաք եղելութեանը ըս տեղե-
կացած: Համբերութիւն ունեցէք լսելու: Հարկ չէ
ձեզ համօգելու, որ Աննա Գավրիլօվնան երբէք ան-
տեղի գործ չի բռնիլ: (Հետեւանը չէտու Առաք Պաշշամ
ուրմ է մէ հոշիք): Նստէք հրեշտակս (Պիհուած չէտու
րեց համբուրում է): Նստէք, հանդստացէք և անանկ
պատմեցէք:

Տիկ. ՀիքիՄ. (Առաջընդ) Սորա այսպիսի կոպիտ
վարմունքից յետու ես, ի Հարկէ, կը հրաժարուէի մի
խօսք անդամ արտասանելուց: Բայց, Սիրեկան Աղայ,
դուք աւելի լաւ կը հասկանաք ինձ: Յիշում էք պա-
տերին կողըրած յախտարարութիւնը. (Պահանջուն) ով
գրեց:

ՀիքիՄ. Իսկ ով ստիպեց զրել....

Տիկ. ՀիքիՄ. Կինարմատը միշտ կարող է յափրշ-
տակուիլ. տղամարդի գործն է նորան զսպելը:

ՀիքիՄ. Դարձեալ ես եմ մեղաւոր...

Տիկ. ՀիքիՄ. Ես ինձ էլ չեմ արդարացնում:
(Սերեհան Աշույն) Դուք լաւ գիտեք Սիրեկան Աղալ, որ
ամբողջ քաղաքը մեզ էր մեղադրում, մանաւանդ ինձ:
Ամէն կերպ յարձակմունքներ և կծու ակնարկութիւն-
ներ եղան, իբր թէ ես, մարդուս պաշտպան հանդի-
սանալով, պատրաստ եմ ամէն ստորին միջոցների
գիմելու լոկ Նախարարեանին վնասելու համար....:

ՍիրԵԿ. Առանկ է: Ես ալ ատոր համար միշտ
կըսէի, որ չանէք ատ բանը:

Տիկ. ՀիքիՄ. Դուք, անշուշտ, լիշում էք՝ թէ ո՞ր
աստիճանի անտանելի եղաւ իմ զրութիւնը: Այդ բա-
նին վերջ տալու մտքով և ամէնքի բերանը դոցելու
համար՝ ես ի՞նչ պիտի անէի....: Ինձ կը մնար ապա-
ցուցանել հասարակութեանը թէ մենք Նախարա-
րեանի դէմ, որպէս բժշկի, ոչինչ թշնամութիւն չու-
նինք, ալլ ընդհակառակը համակրում ենք և գնա-
հատում նորա մասնագիտութիւնը: Եւ ահա ես ընտ-
րեցի պարզ և ամենահամոզեցուցիչ միջոց՝ այնպէս
ձևացայ, որ իբր թէ տկար եմ և ինքս բժշկում եմ
Նախարարեանի ձեռքով....:

ՍիրԵԿ. Ահա հեռատես խելք, նուրբ մտածողու-
թիւն, ապրիս հրեշտակս (յեւու պաշտամ է): Տեսաք,
աղաս.

ՀիքիՄ. Թողէք ի՞նձ:

Տիկ. ՀիքիՄ. Այնուհետեւ կը գտնուին, ի հարկէ,
չար լեզուներ, որոնք կը հնարեն՝ իբր թէ Նախարար-

եանը սիրահարուած է և իմ տրվածուն է: Ես շատ
ուրախ կը լինէի, որ այդպէս լինէր...

ՀիքիՄ. Ի՞նչ...

ՍիրԵԿ. Սպասէք, աղաս, համբերութիւն ունեցէք:
ՀիքիՄ. Ի՞նչպէս թէ սպասեմ...

ՍիրԵԿ. Ջարունակեցէք, հոգիս, ետքը:

ՀիքիՄ. Այն, ես շատ ուրախ կը լինէի, որ նա
ինձ սիրահարուէր և ահա ի՞նչու: Ոչինչ բան այն-
քան վնասակար և վտանգաւոր չէր կարող լինիլ Նա-
խարարեանի համար, որքան նորա ներքին ընտանե-
կան խառնակութիւնը: Նորա կինը նախանձից և
բարկութիւնից կը տռաքուէր և տանը այնպիսի մի
դժոխք կը սարգէր, որ միանգամից կը թունառորէր
ամուսնոյ կեանքը և հանգստութիւնը:

ՍիրԵԿ. Առ ի՞նչ հրաշալի խորհուրդ էր, աղաւ-
նիդ իմ, հրեշտակդ լիմ, (յեւու պաշտամ) ատանկ խե-
լացի, հեռատես հնարք կեղնի:

Տիկ. ՀիքիՄ. Ինձ այնպէս է թւում, որ այս
ամենալաւ միջոցն է վրէժ առնելու այն թղթակցու-
թեան դէմ, որ գրել են ամուսնուս մասին: Ես հա-
ւատացած եմ, որ գրողը Նախարարեանն է: (հասկածա-
ւոր իւրողիւ նայելով Սերեհան Աշոյի կըոյ) Դուք ի՞նչ կար-
ծիքի էք, Սիրեկան Աղայ:

ՍիրԵԿ. Ես... ես... ուզեղը չը գիտեմ, աչքիս լոյս:
Իսկ եթէ...

Տիկ. ՀիքիՄ. Ի՞նչ...

ՍիրԵԿ. Եթէ եղաւ, որ Նախարարեանը, հրա-

պոլոներէդ և կատարելագործութիւններէդ յափշտակուած՝ իրօք սիրահարուեցաւ, ան ատէնր...

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ո՛հ, այն ժամանակ ես նորան այնպէս կը խայտառակէի, որ նա ստիպուած կլինէր քսան և չորս ժամուայ մէջ ամօթալի կերպիւ փախչել քաղաքից...

ՍԻՐԵԿ. Ահա ատ որ կը ցանկալի և կուզէի որ իրօք պատահէր:

ՀԵՔԻՄ. Ի՞նչ կը ցանկանալիք, որ կնոջս սիրահարուեն: Ճատ շնորհակալ եմ:

ՍԻՐԵԿ. Ո՛չ, կը ցանկալի խայտառակութիւնը...

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Ես այնպէս կը սարքէի բանը, որ երբ նախարարեանը առաջս չոքած՝ ձեռքերս պաշում լինէր և սիրոյ զգացմունքներ արտայայտում, Սօլօմոն Ստեփանիչը բոլորը լսում կը լինէր միւս սենեակից: Այնուհետև, դուք միայն երևակալեցէք... Երբ որ կուզայ, ի հարկէ, պէտք եղած ժամանակը, յանկարծ ես նշան կանէի, ամուսինս ներս կուզար և հանդիսաւոր կերպիւ խայտառակելով՝ դուրս կանէր նախարարեանին:

ՍԻՐԵԿ. Ձեռքդ տուր, հրեշտակդ իմ (Պաշտամ և յեռալ): Ահա խելօք, ահա թանկագին դանձ:

ՀԵՔԻՄ. (Պեշնյը կը ինալու) Ոչինչ չեմ հասկանում, կամ իրօք ես ցնորուել եմ, կամ... Էհ (յեռալ լատի պալով գնում) է իւր ենեռիլ:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Մենք էլ, Սիրեկան Աղայ, գնանք սուրճ խմենք (Պաշտամ և Ժողովով և իոդիտով):

ՍԻՐԵԿ. (Հետեւելով ակնող ինչն իրո՞ն) Ամէն տեսակ վարպետ կնիկ տեսած եմ, համայ ասանկ սատանացին հեչ հանդիպած չէի...

ԵՐԵՒՅՑԹ VIII.

ՍԵՐՈԲ և ՍԱՂՄՈՍԵԱՆ (Հեռակ), ապա ՊԱՐԶԱՄՏԵՇՄ:

ՍԱՂՄ. Ըսէ քի՝ հրամանոցդ տեսութեան եկած է:

ՍԵՐ. Աղէլ (Տառաւմ է Հեքիմանի սէնեալը):

ՍԱՂՄ. Հարիֆը, կըսեն, շեշտունցեր է, մենք ալ եկանք թամաշալ ընելու:

ՊԱՐԶ. (Վարով և զգուշութեամբ նէրս գաշով) Յաջողում քաւոր:

ՍԱՂՄ. Ասծու բարին:

ՊԱՐԶ. Իրաւ է:

ՍԱՂՄ. Ի՞նչ:

ՊԱՐԶ. Ապա չես կարթցեր. դազէթաները կը գլին քի խելքէն ելեր է, կնիկն ալ խնդրեր է որ ժանտարմայով հոշալիտալ տանեն. կըսեն ասօր պիտի տանեն: Ափսոս մարդ: Ի՞նչէն եղաւ:

ՍԱՂՄ. Աղբար, հեշտ բան է ասոնց փեշաքը. ամէն մարդու ներսը դուրսը զիտեն, դեղ կուտան, կը կարդան հա կը կարդան, զլուխ կը դիմանալ...

ՍԵՐ. (Պաշտամ գալով) Աղաս կըսէ՝ թէ ասոր թողութիւն ըրէք, հալ չունիմ. եախու կպցուցեր է...

ՄԱՂՅ. և ՊԱՐՁ. (Հայութածառը մելեանց հայելով)

Ո՞ւր տեղը կպցուցեր է:

ՍԵՐ. (Վեշ Շայ առաջ) Սա տեղ...

ՄԱՂՅ. Է՞ս, ըսել է իրաւ է:

ՊԱՐՁ. Ապա ինչ, արիւնը գլուխէն վար քաշե-
լու համար ըրեր է...

ՄԱՂՅ. Ճիտակն ըսէ, Սերոը աղայ, ինչէն պա-
տահեր է...

ՍԵՐ. Գիտեմ, աղաս, պաղեր է, սաթլիջամ
եղեր...

ՊԱՐՁ. Ջատ կուզէի, տեսնալ: Մէյմալ, Սերոը
աղայ, ջաֆեայ քաշէ, ըսէ աղավիդ, թէ կարեոր
գործ ունինք, տղուս գլուխը կը ցաւի:

ՍԵՐ. Կրսեմ, համայ՝ կը վախնամ սրդողի (Դար-
չեալ ներս է գնում չետիմանի սեւեալը, բայց իսկոյն դուրս
է գոշին և նորու էտենից շոշում է բժշ ին աշոշուիլ:) “Հա-
զար անգամ ասի՞ կորէք, չեմ կարող, չեմ ընդու-
նում»: (Սաշնուանը և Պարզամունը վախած մելեանց երեսին
նայելով սույն ծայրերի վրայ գնում էն դեռի դուները):

ՄԱՂ. Իրաւ է եղեր:

ՊԱՐՁՅ. Իրաւ չեղնի նէ ղաղէթայ կը ընկնէր
(Բոշիրենեանք դուրս էն գնում մեջին դուներից):

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Խ.

ՏԻԿ. ՀԵՖԻՄԵԱՆ, ապա ՆԱԽԱՐԱՐԵԱՆ

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. (ՉԴՐԵՆԱԾ ՆԵՐԱ ԳԱՐԵԼՈՒ), Ա՛յս Ե՞նչ
վատ ժամանակին եկաւ. հիմայ ի՞նչ անեմ: Իրաւ է, ես
ի՞նքս ասացի երեկ, որ այսօր ժամի 12-ին գայ, բայց
կարծեցի թէ սովորաբար ամուսինս տանը չի լինիլ.
Ես ի՞նչ զիտէի թէ փոստը երեկոյեան այնպիսի պար-
գև կը բերէ մեզ, որ ամէն բան տակուվերեւ արաւ:
(Կորդ ինչ Տառձելուց յետոյ) Ամենից լաւն է՝ կը հրա-
մայեմ ծառալին չ'ընդունել...

ՆԱԽԱՐ. (ՉՊԱՊ ՆԵՐԱ ԼԹԱԵԼՈՒ ՊԱՀՆ-Ը է տիէ. ՀԵՖԻ-
ՄԵԱՆԻ յետու և չէ բայ Առջնում): Ի՞նչու էք այլպիս
շփոթուած, ի՞նչ է պատահել...

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. (ՅԵ-Կ ԽԵԼՈՒ) Հարցնում էլ էք.
ապա լրազրի մէջ գրածը. ամօթ է ձեզ Նիկօլայ
իւանիչ:

ՆԱԽԱՐ. Բայց միթէ...:

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. (ՉՊԱՊ ԽԵԼԵԱՆ ԽՈՎԱՅ) Ի՞նչ, դուք
չէք: Պիտի հաւատացնէք ինձ թէ զրողը դուք
չէք...

ՆԱԽԱՐ. Ո՛չ, ոչ: Ի՞նչպէս կը համարձակիմ ծած-
կել ձեղանից ճշմարտութիւնը: Ես զրեցի: Բայց նախ որ
այդ վրէժ էր ձեր յարտարարութեան փոխարէն, երկ-
րորդն էլ՝ որ այդ զրուեցաւ գեռ այն ժամանակ,
երբ դուք իմ թշնամին էիք և ոչ թէ այն չքնաղ

տիկինը, որի համար ես այժմ պատրաստ եմ զոհել
ամեն բան,

Տիկ. Հեթիվ. Կամաց խօսացէք, ինդրեմ, կա-
մաց: (ամուսնու սէնեանի հռչի նայելով) Ամուսինս տանն
է և շատ զայրացած... այս առաւօտ մի տմբողջ
բացատրութիւն ունեցանք... կարող է դուրս դալ և
վատ ընդունել ձեզ...:

ՆԱԽԱՐ. (խոշոշ) Ձեզ տեսնելու զուարձութիւնը
ինձ համար աւելի թանկ է, քան թէ այն անբաւա-
կանութիւնը, որ կարող է պատճառել ինձ ձեր ամու-
սինը (գլխորիշ սէնանի Քր-յ Շնելով) Ձեզ համար ամէն
զոհաբերութեան պատրաստ եմ (պաշտ-մ է չե-ս-է):

Տիկ. Հեթիվ. Ա՞հի, բնչպէս չէք ուզում հասկա-
նալ...: Մի բան որ պատահի, չէ՞ որ ես պիտի վը-
նասուիմ: Մենք կարող ենք մի ուրիշ ժամանակ
տեսնուիլ:

ՆԱԽԱՐ. Ո՞ւր է, երանի չէր լինի: Բայց երբ
մենք առանձնակի տեսնուինք, դուք այդպէս խիստ
չէք լինիլ ինձ հետ, այնպէս չէ...

Տիկ. Հեթիվ. Դուք չէք ուզում հասկանալ, որ
կան բաներ, որ լեզուով չեն ասուիլ:

ՆԱԽԱՐ. Իսկ այս ըսպէս դուք ինձ այնպէս
էք դիմադրում, որ իմ մեղս չէ, եթէ ես էլ (պա-
շտ-մ է չե-ս-է):

Տիկ. Հեթիվ. (անհանգիստ նայելով ու հոգի ամուսնոյ
սէնեանի դառները) Ես անհանգիստ եմ, վախում եմ, իսկ
դուք օգուտ էք քաղում...

ՆԱԽԱՐ. Այս, օգուտ եմ քաղում, որովհետեւ ձեզ
հետ ուրիշ կերպ վարուել անկարելի է.,.

Տիկ. Հեթիվ. Կարող են լսել, ներս գալ...: Աղա-
շում եմ ձեզ:

ՆԱԽԱՐ. Ես այս ըսպէս կերթամ, եթէ իմ միայ-
նակ ինդիրս կը կատարէք...:

Տիկ. Հեթիվ. (ժպիտով) Ի՞նչ, «տեսնուել առանձ-
նակի» և «խիստ չլինիլ»:

ՆԱԽԱՐ. Իսկ և իսկ այդ է:

Տիկ. Հեթիվ. Ձեր պահանջը շատ չէ, Նիկոլայ
իւանիչ:

ՆԱԽԱՐ. Ահա տեսնում էք, ես ստիպում եմ
ձեզ տալ ինձ ձեր համաձայնութիւնը: Հասկացէք,
որ ես ամէն կերպ օգուտ եմ քաղում ներկայ ըսպէսից
և բռնի խլում եմ ձեր հաճութիւնը: Գիտեմ, որ իմ
արածս բռնութիւն է, բայց բուռն սիրոյ կրքից յա-
ռաջացած մի բռնութիւն... (բառելով և պաշելով
չէ-ս-է):

Տիկ. Հեթիվ. (Յանուար կիւլով և մի հռչի նայելով)
Ի սէր Աստուծոյ... (պայտ-մ է ու հոգի ամուսնոյ
դառները):

ԵՐԵՒՅՑ Թ Խ.

ՆՈՅՆԻ և ՍԻՐԵԿԱՆ ԾՂԱՆ (որ հոգին ուստի զգուշութէամբ նոյնում է):

ՆՈՅՆԱԲ. (Հօպէնալով և յածը յայնով) Եթէ ես մի տեղ պատրաստեմ առանձնակի տեսնուելու համաձայն էք:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Չգիտեմ... յետոյ... մի ուրիշ ժամանակ...:

ՍԻՐԵԿ. (իսկու իւրեան) Ասոր ալ վկայ եղանք (յէս պահանելով):

ՆՈՅՆԱԲ. (անհամբէր ուստիրը վէր ժաշելով և առիպողական յայնով) Այդ պատասխան չէ, Աննա Գավրիլովնայ, կրկին հարցնում եմ — համաձայն էք... (լուսաւմ է Հեքիմին հաղալու յայնը):

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Հեռացէք, խնդրեմ, դալիս է:

ՆՈՅՆԱԲ. Ցտեսութիւն ուրեմն (որոր է գնում):

ԵՐԵՒՅՑ Թ ԽI.

ՏԻԿԻՆ ՀԵՔԻՄԵԱՆ և ապա ՍԻՐԵԿԱՆ ԾՂԱՅ

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. (Հէսա՞ն) Իրաւ ինձ սիրահարուել է, թէ կեղծում է և լոկ աշխատում է հետս խաղ խաղալ: (Հոածէլով) Սուտ է, թէ զորդ, բայց քանի որ խաղը սկսուել է, ես էլ պէտք է շարունակեմ սիրա-

հարի դերը և աւելի ու աւելի խրեմ, տեսնեմ թէ ուր կերթայ բանը... Ա՛խ, երանի թէ կինը մի կերպ լըսում լինէր մարդոյ սիրահարական բացատրութիւնները, ինչ կը տռաքուէր...

ՍԻՐԵԿ. (իբր Ա՛ մայմանքար ներս գալով) Աս ինչ է, մէնակ էք մնացեր, աչքիս լոյս, աղան դեռ լիր սենեակն է...: Ներեցէք յատուկ որ ձեզ մէնակ թողուցեր եմ. ես ալ բաղջան իջեր էի, ան ինչ գեղեցիկ շտկեր էք...:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Իրաւ, Սօլոմոն Ստեփանիչը ինչու չէ դուրս զալիս այսքան ժամանակ. գնամ տեսնեմ (յանում է ամուսնոյ հենեակը):

ՍԻՐԵԿ. (Յնա՞վ) Եթէ ասօրուայ բոլոր տեսածս ու լսածս Ելէնայ Պաւլովնային քաղաքավարի ձեռվ հասկացունէինք և պատշաճ խորհուրդներ տալինք — իմացած եղիք, որ աս բժշկներէն մէկումէկին տեղը առանց տարակուսանքի բացուած է. պրծաւ...:

ԵՐԵՒՅՑ Թ ԽII.

ՍԻՐԵԿԱՆ, ՏԻԿԻՆ ՀԵՔԻՄԵԱՆ և ՀԵՔԻՄԵԱՆ

ՏԻԿ. ՀԵՔԻՄ, (ա՛լս մանելով ամուսնոյ հետ) Ի՞նչ ես այդպէս վհատուել ու կրզպուել սենեակում. գնանք փոքր ինչ պտըտենք կառքով:

ՀԵՔԻՄ. Գնանք — որ ամէնքը մատով ցոյց տան թէ տես սա է խելազարը, շնորհակալ եմ:

Տիկ. Հեթիվ. Երբէք իմ առաջարկութիւնը չէ ընդունվում (հեղայած ուրբա է գումար):

Սիրեկ. Ի՞նչու կը նեղանաս, աղաս: Անսա Գավը թիօվնալի խորհուրդը վատ չէ. քիչ մը կը զբունուք, կը զուարձանաք:

Հեթիվ. Թողէք ինձ, խնդրեմ, թողէք: Ես խելագար եմ... ես ոչ ոքի չեմ ուզում տեսնել... ինձ առանձնութիւն է հարկաւոր, հանդիստ կուզեմ մընալ, հասկացէք:

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Խ III.

Հեթիվեսն, Սիրեկն, Տիկին և ՊԱՐՈՆ ՄԱՀՏԵՍԵՍՆՔ:

Տիկ. ՄԱՀ. (աեր Առշելով և ուշադի զաղեցի Հեթիօվանի հար) Այս, յարդելի Սօլոմոն Ստեփանիչ, ասացէք խնդրեմ, ինչպէս էք... (Սերեհանի յետքը Առլուտելով):

ՄԱՀ. (շհամբակուելով մասել, ուշադի միջեց) Ջարլօտ Սավելիվնայ քիչ մը հեռու կայնէ...

Հեթիվ. (վէր հետարջ բնակ երեսն) Ջուտով ամբողջ քաղաքն էլ կուզայ խենդին նայելու (աիլին Մահականին) լաւ եմ, շատ լաւ եմ, շատ լաւ (սուրում է):

Տիկ: ՄԱՀ. (Սերեհան Աշային) Իրաւ որ քիչ է մընում մարդու վրայ յարձակուի, (իւր ամուսնուն) Հայրապետ Արխիպիչ, ինչ ես դռներում կանգնել, մօտեցիր, այստեղ ոչինչ վտանգ չկայ, քիթդ էլ սրբէ...:

ՄԱՀ. (առաջ գալով և աշցը հերիմանից չհեռացնելով)

Ճշմարիտն ասած, ես չը գիտեմ թէ մենք ինչու համար եկանքք...:

Տիկ. ՄԱՀ. (շնորհաբելով) Դու կարծեմ ճառ ես կամենում ասել: (Ժաշըլերով) Ասա, ես պատրաստ եմ լսելու. քիթդ սրբէ և ասա...:

ՄԱՀ. (հուշեն նստելով ո՛չ, ես ոչինչ...)

Տիկ ՄԱՀ. (իսկ երեսն) Իսկ որ «ոչինչ»: (Սերեհան Աշային գլուռ հօպ է հանչում և գլուռ շոյց պաշոր Հեթիօվանի հրայ) Բանը շատ է վատ: (յետքով շոյց է պաշոր եւ ժամապը): Այս բոլորովին...

Սիրեկ. (յածը) Դահա բելլու չէ:

Հեթիվ. (յանշարձ յետքը սեղանին պարնելով) Պրոտոկոլ (աթենքը շիռլիում էն):

ՄԱՀ. (վէր լուսաւով եռ ինջը) Ջարլօտ Սավելիվնայ, երթանք...

Տիկ. ՄԱՀ. Նստիր, վախկոտ: (Մահական նստեմ է) Քիթդ սրբէ...

Հեթիվ. (բարձրացնելով) Դատի, դատի պիտի գիմեմ: Թող կոմմիսիայ նշանակեն, թող դան քննեն թէ ես խելագարուած եմ թէ առողջ...

Տիրեկ. (հօպեալով) Հանգստացէք, աղաս:

Հեթիվ. (առել բարձր) Հանգստամնամ... ո՛չ, ես կուզեմ, որ դան պրօտոկոլ կազմեն: Ես կը հաստատեմ զրպարտութիւնը: Դատի կը քաշեմ անպիտանին: Բերդումը կը վիթացնեմ: Նա կը հասկանայ, վերջապէս, թէ ինչ կը նշանակէ պատուաւոր մարդկանցը վիրաւորել: Նա խլեց իմ հանգստութիւնը,

թունաւորեց իմ կեանքը: Այս, ես կը հաս—տա—
տեմ: Թող ճանաչէ նա ինձ թէ ես ով եմ: Սպա—
սիր, բարեկամ (չուռշը բարչայրուծ աղաւանում է և գնում
է-ը անհաջող այլաշրած: Ահնչը տեղից վեր էն լաւչում:
Մահաւաւանը դափեց բանում է ինո՞ց ժեշը: Արեւիսն Աշան,
մը անիւն ժաշուաւլով, ծիծաշրամ է:)

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԶՈՐՌՈՐԴ

Միջնորդեանի բնակրանը համեստ կան կարասիքով: Միջին
գուռը տանում է նախասենեակը. ծախ կողմը երկու դուռ, մէկը
ննջարանի, միւրը խոհանոցի, Աջ կողմը պատուհաններ:

ԵՐԵՒՈՅՑ Թ 1.

ՄԻՋՆՈՐԴԵԱՆ և ապա ՄԱԹՈՍ ԾԵՄԱՆ

ՄԻՋՆՈՐԴԻ. (պատրաւուելով երթաշու) Այս րոպէիս
ստացած նամակս (յայց պաշավ) ամենայն ինչ պար—
զեց: Ես վաղուց էի կասկածում այդ մարդու վրայ: Հիմայ իմացայ նորա չարութեան նպատակը: Սիրե—
կան Աղան իւր եղրօրորդի Գրիգորին, որ իմ լաւ բա—
րեկամն է, ցանկանում է շինել քաղաքիս բժիշկ և
զորա համար աշխատում է նախ և առաջ փախցնել
այստեղի բժիշկներին: Տեսէք Հիմայ ինչ է զրում
Գրիգորը «Իմ մաերիմ Միջնորդեան: Հօրեղբայրս հրա—
ւիրում է ինձ դալ ձեր քաղաքը բժշկութեան պաշ—
տօնով և, օգուտ քաղելով ձեր երկու բժիշկների
կոլիներից, աշխատում է ինձ համար տեղ բաց ա—
նել: Ես իւրեան դեռ չը պատասխանեցի և ահա քեզ
դիմելով աղաջում եմ համոզիր ծերունուն, որ 'ի զուր

Հոգ չը տանէ իմ մասին, որովհետեւ ես արդէն հրաւիրուեցալ բժշկութեան պաշտօնով Մասկվայից ոչ հեռու մի մեծ գործարանում և շատ ձեռնտու պայմաններով պարտաւորուեցալ այնտեղ երեք տարի մնալու... մանրամասնութիւնները կը գրեմ, քո Գրիգոր»: Փամի 12-ը շուտով կը լրանայ, (շանգը առաջ) շտապեմ, գնամ, ցոյց տամ այս նամակը Սիրեկան Աղային, որ գուցէ դադարի ջուրը պղտորելուց: (Ներ հանող ծառացին), Սենեակը կարգի բեր և ճաշը պատրաստիր. ես կէս ժամից յետոյ կը վերադառնամ (Շանու է գնում. Մանու ծառաւ նույնից գնում է գնում դանելը և հերաբառում):

ԵՐԵՒՈՅԹ Ա.

ՄԱԹՈՍ (Քննչ)

ՄԱԹ. (աեղա-որելով աւետակը) Հոս կարդի բերեմ, չէ նէ ճաշը պատրաստեմ: Կէս ժամէն կուգայ ալ չի թողուր որ շէնք շնորհի կերակուր տամ. շուտ ըրէ, հայ շուտ ըրէ... Ղահվէջի կիկոյին մանչը ամիսը հինգ մանէթ կը ստանայ, համայ (շանգը առշում էն) Վէկ է... (Գնում է դանելը բանաշում):

ԵՐԵՒՈՅԹ Բ. III.

ՄԱԹՈՍ և ՏԻԿԻՆ ՀԵՖԻՄԵԱՆ

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. (Ասեառենէակից խօսողով) Ասում ես աղադ նոր գնաց. շնուտ կուգայ...

ՄԱԹ. Հիմայ գնաց, կէս ժամէն տունը կեղնի:

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. Լաւ, գու գնա զործիդ. ես այստեղ կը սպասեմ:

ՄԱԹ. (ինչն է-ընթառ) Գօխտուրին կնիկն է, համայ երկու տարի է հոս եմ, մեր տուն հէչ մի խանում չունէր եկած:

ԵՐԵՒՈՅԹ Բ. IV.

ՏԻԿ. ՀԵՖԻՄԵԱՆ, ապա ՄԱԹՈՍ

ՏԻԿ. ՀԵՖԻՄ. (Քննչ) Սիրտս գողում է..., ի՞նչ կասեն, թէ ուր եմ եկել... Գոնէ Միջնորդեանը տանը լինէր ու նրա ներկայութեամբ խօսէինք: (Հանում է ջեմից մէ նամակ և կարտում): «Ճիշդ ժամի 12-ին, աղաջում եմ, զտնուեցէք պ. Միջնորդեանի տանը. շատ կարեոր գործ ունիմ ձեզ վերաբերեալ»: Անստորագիր է, բայց կասկած չկայ, որ գրողը նախարարեանս է... Արդեօք ինչ գործ ունէ... զատ կը ցանկայի զիտենալ նպատակը: Եթէ նա ժամադրութիւն է նշանակել ինձ այստեղ իւր սովորական սիրոյ բացատրութիւնները շարունակելու մտքով, շատ սխալ-

վում է և այսօր իսկ կը խայտառակուի: Ես, վերջապէս, կը յալոնեմ իրան, որ երբէք չեմ ներել ինձ այնքան ստորանալու, որ նա համարձակուի ինձ իւր տռփածուն համարել: Միթէ նա ինքը չէ հասկանում, որ ես հետը խաղ եմ իսազում լոկ նորա կնոջ նախանձը գրգռելու համար: (Մատթէուսի) Բայց ինչո՞ւ տանուտէրն էլ տանը չէ... Արդեօք զբժութեամբ է հեռացել տանից... Գուցի՞ այստեղ մի դաւաճանութիւն կալ իմ դէմ, որին Միջնորդեանն էլ մասնակից է... Չեմ կարծում. սա մի աղնիւ երիտասարդէ, մեր տանու բարեկամն է և միշտ աշխատում է հաշոռութիւն կայացնել ամենիս մէջ...: Եթէ ամուսինս իմանալ, որ ես եկել եմ այստեղ նախարարեանի հըրբառէքով, ինչ կասէ: Ի՞նչով կարող եմ արդարանալ թէ նորա առաջ, թէ ալլոց առաջ և թէ, վերջապէս, նոյն իսկ իմ առաջ: Ո՞րքան սխալուեցի, որ եկայ... Արդեօք երթամ... Բայց ինչ գտւրս կդայ երթալուց. չէ որ նախարարեանն էլ, Միջնորդեանն էլ կ'զիտենան, որ արդէն եկել էի: Այս բռպէիս պատրաստ եմ գետին մտնելու... (Լուսում է շանգի յոյն) Այս անպատճառ նա է (Պալառ խոհանոցի գոյնը անյառում է անետէուլ ստիտուէնետէուլ՝ դառաս բանայու համար): Լսիր, Մաթոն, եթէ աղադ չէ և օտար է, առաջ տանը ոչ ոք չկայ, լսեցիր. ես կը մտնեմ այն սենեակը: (Միջնորդէունի հաջորդածը հոնելով) Ի՞նչ անտանելի գրութիւն...

ՄԱԹ. Ճատ աղէկ (գնում է դուռը բանութու):

ԵՐԵՒԱՅԹ V.

ՏԻԿ. ՄԱՀՏԵՍԵԱՆ և ՄԱԹԹՈ

ՏԻԿ. ՄԱՀ. (ՀԵՇԻ ԳԱՅԻ) Վնաս չը կայ, որ աղադ տանը չէ. ես կը սպասեմ, դու գնա գործիդ:

ՄԱԹ. (ՀԱՅԻ ԴԱՎԻ ՅԵՓ ու յԵՓ ՀԱՅԻ ՀԱՅԻ) Աս ալ տեսած չունէնք, շատ բան... (ԴՐԱՄ է ԳՆՈՒՄ):

ՏԻԿ. ՄԱՀ. (ՔԱՅԱԿ) Այս ինչ կը նշանակէ... Խաբեցին ինձ, թէ ես եմ շտապել (ՅԵՓԵ ՀԱՅԱՀ ՀԱՅԻ ՀԱՅԻ): Զէ... «Եթէ 12 ժամից մի քառորդ անց շնորհ բերէք պ. Միջնորդեանի տուն, ներկայ կրլինիք այն առանձնակի ժամադրութեանը, որ տիկին չէքիմեանը նշանակել է իւր սիբահար նախարարեանին»: Ահա կարճ ու աղդու: Ստորագրութիւն էլ չկայ. հարկաւոր էլ չէ ստորագրութիւնը: Կարդացի թէ չէ արիւնը գլուխս ընկաւ ու գժուածի նման տանից դուրս թռայ: Մտքումս ասացի ինչ կը խայտառակուին, երբ որ յանկարծ վրայ հասնեմ ու տեղն ու տեղը բռնեմ... Դու այն տիկին չէքիմեանին ասա, որ միշտ կոտրտվում է մեր առաջ և ուրիշի աչքում գերան է փնտրում: Անցեալ օր, գիտէք, ինձ ինչ ասաւ (Մատթէուս) «Ի՞նչ անենք թէ քո ամուսինը մի տարած տրօրած մարդ է. բարոյական կնոջ պարտականութիւնն է ամէն բան համբերութեամբ տանել»: Լսում էք՝ «Համբերութեամբ տանել»: Հէշտ է ամելը... չիմայ մէկ բռնէի ու ասէի թէ այս քո ա-

րածը ի՞նչ է... (Արհամարտէու չեռվ) Ուղիղն ասեմ, ես Նախարարեանից էլ չէի սպասում այս բանը. միթէ, վերջապէս, նա աչք ու ճաշակ չունէ, որ մեզ ամենիս թողած միայն տիկին չէքիմեանին ընտրեց... (Լուսում է պահպան չայնը): Արդեօք նրանցից ո՞րն է եկողը... չետաքրքութիւնից մեռնում եմ: (Ժամացին, որ ներս գոյշի շատապում է ուղարկեանէական): Մաթոս, ոչ ոքի չասես թէ ես այստեղ եմ. ես քո խոհանոցի դռներում պիտի պահուիմ. լսեցիր. եթէ ասել ես, տես (չեռական սպասանում է և գնում է դահկում լուսունուս):

ՄԱԹ. (Համաձաւոր և բարերացուն) Ի՞նչ գործ ունիմ (Գնում է ուղարկը բանալու):

ԵՐԵՒԱՅԹ VI.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ և ՄԱԹՈՍ

ՆԱԽԱՐ. Ասում ես շուտ կդալ աղմդդ:

ՄԱԹ. Կըսէր կէս ժամէն:

ՆԱԽԱՐ. Ճատ բարի, դու գնա խոհանոցդ, ես կը սպասեմ նորան (Մաթոսը որում է գնում):

ՆԱԽԱՐ. (Հետակ ժամացոյցին նայելով) 12-ից հաղիւ մի քառորդ է անց: Ես ուշացայ: Բայց տիկինը ինքն ուր է. (հոնում է ծոյցի նամակը և իտրում): «Եթէ ձեր թախանձանաց համեմատ՝ կամենում էք, վերջապէս, ինձ առանձնակի տեսնել, ճիշդ ժամի 12-ին գըտ-

նուեցէք պ. Միջնորդեանի տանը, ուր ամեն նախագուշութիւններ տեսնուած են»: Վախից չէ էլ սոորագրել իմ նազելի տիկին չէքիմեանը: Միջնորդեանն էլ տանը չէ. երկի նրան առաջուց յայտնել է մեր գաղտնիքը և խնդրել է տանից հեռանալ, որ մենք բոլորովին մէնակ լինինք: Այդ շատ հասկանալի է: Կանայք ինչ հնարքներ ասես՝ կարող են մտածել: Սակայն այսպիսի նախապատրաստութիւններ տեսնող տիկինը երկաւայում է արդեօք՝ թէ ինչպիսի քիթպիտի ստանալ այսօր, երբ սիրոյ բացատրութեանց փոխարէն լսէ բերանից, որ ես, իրեան վրէժխնդիր լինելով, լոկ ծաղրում էի մինչեւ հիմայ և խելքն էի չափում: Միթէ նա իրաւ ինձ սիրահարուած է կարծում և կամենում է որ կնօջս իւր վրայ փոխեմ... համար համար համար (Նայում է ժամացոյցին): Ճատով 12^{1/2} կինի, իսկ տիկինը չկայ...: Ի՞նչ կը նշանակէ այս չինի թէ նա էլ ինձ է ծաղրում, իսկ ինքը տանը նստած է և մտքումն էլ չէ անցկացնում դալը... ահա այդ լաւ իսակ կ'լինի: Ոչ, չեմ կարծում թէ նա այսպիսի գեղեցիկ առիթ ձեռքից բաց թողնէ. անպատճառ կդալ: Երկի պ. չէքիմեանն է արգելքը: Այդ իմ պատուելի կոլէգան առանց հանագի բարկացած է վրաս և ինձ դատ է սպասնանում: (Լուսում է պահպան չայնը երես անգամ միմանց կրոյ) Այսպէս անհամբեր զանգակ զարնողը անպատճառ տիկին չէքիմեանն է: (Մաթոսին, որ սենեական շատապ անցնում է ուները բանաշուր, չեռական նշան է անում շունչ): Ասս, իմա-

ցար... (Աշուա՛) Արի այս անկիւնում բաղկալթոռի ե-
տևը պահուիմ, որ յանկարծ ուրախացնեմ (պահպահ է):

ԵՐԵՒՈՅԹ VII.

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ և ՏԻԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԵԱՆ

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. (Ե բառն դաստիարէ աշնեակէը նայելով) Ոչ ոք չկայ. միթէ ինձ խաբեցին...

ՆԱԽԱՐԱՐ. (շարժացած և դրսուելով) չեղինէ...

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. (դաստիարէ ժղովով) Մենակ ես... դեռ
չե եկել...

ՆԱԽԱՐԱՐ. Ի՞նչ կը նշանակէ այդ...

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Ի՞նչ շատ ես զարմանում, որ
դու նորան էիր սպասում, իսկ փոխարէնը ինձ տե-
սար:

ՆԱԽԱՐԱՐ. Դու ինչու ես այստեղ, կրկնում եմ:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Եկել եմ վկայ լինելու քո սիրա-
հարութեան տեսակցութեանը տիկին չէքիմեանի հետ:

ՆԱԽԱՐԱՐ. Դարձեալ այդ ցնորմունքների ետևիցն
ես. տեսնում ես այստեղ ոչինչ տիկին չկայ:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Ճատ կարելի է որ ես շտապել
եմ. նշանակուած է ժամի 12 և կէսին: (դաստիարէ ժղո-
վով) Մի յուսահատուիր, կուգայ:

ՆԱԽԱՐԱՐ. (Անգն իւրեան) Տեսնում էք ինչ չարն է
այդ տիկին չէքիմեանը, սորան էլ գըել և հրաւ-
րել է որ ինձ խալտառակէ: (Կնոջը) Խնդրում եմ,

չեղինէ, գնա տուն հանդիստ կաց. ինչպէս տեսնում
ես, այստեղ ոչինչ սիրահարական տեսութիւն չկայ:
Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Մենք միասին կերթանք:

ՆԱԽԱՐԱՐ. Ես եկել եմ Ծիջնորդեանի մօտ, գործ
ունիմ, և պիտի սպասեմ նրան:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Ես էլ պիտի սպասեմ, ես էլ գործ
ունիմ:

ՆԱԽԱՐԱՐ. Ի՞նչ գործ:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. Պիտի շնորհակալութիւնս յայտ-
նեմ, որ ամուսնուս համար հրաւերքներ է սարքում:
(Հոգում է զանգե չայնը) Ահա եկաւ, ումը որ սպասում
էիր. (առանցին). ախ, երանի նա լինի:

ՆԱԽԱՐԱՐ. (առանցին) Ես կրկնում եմ, որ ոչ ոքի
չեմ սպասում, բացի տանտիրոջը:

ԵՐԵՒՈՅԹ VIII.

ՆՈՅՆՔ և ԲԺԻՇԿ ՀԵՔԻՄԵԱՆ

ՀԵՔԻՄ. (առանց բարեկը, զարմացած նայում է Նա-
խարարեաների վրայ, իսկ առաջ նորու վրայ) ... Իսկ կի՞նս:

ՆԱԽԱՐԱՐ. Ո՞ւմ էք հարցնում:

Տիկ. ՆԱԽԱՐԱՐ. (Դաստիարէ) Միթէ պիտի գայ:

ՀԵՔԻՄ. (առանցին) Սյս աստիճանի էլ լրացնութիւն:
(Նախարարեաններին) Դուք ինձ կամենում էք ծաղրել...
դուք մոռանում էք, որ ձեր այս քաղաքը գալու
օրից խլեցիք իմ հանգստութիւնը, կեանքս թունա-

ւորեցիք, լրագիրներում ինձ խելադար հրատարակեցիք և հիմայ էլ դիպչում էք իմ ընտանեկան պատուին՝ կնոջս ժամադրութիւններ նշանակելով:

ՆԱԽԱՐ. Ճարունակեցէք, ինդրեմ...

ՀԵՔԻՄ. Իսկ դուք, տիկին, բաւական չէ որ ինքներդ շտապել եկել էք ներկայ լինելու մեր ամուսինների տեսութեանը, այլ ինձ էլ հրաւիրել էք...

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. (Քեր լաշելով) Ե՞ս, հրաւիրել...

ՀԵՔԻՄ. Այս ձեր նամակը չէ, որ կէս ժամ առաջ ուղարկել էիք ինձ...

ՆԱԽԱՐ. (Որ միշտ հիմոյ աղջած նայում էր էնոյ զրոյ, իլում է չետիմանի չեռակաց նայուիլ և բարձր էնրում) «Այսօր ժամի $12\frac{1}{2}$ եթէ շնորհ բերէք պ. Միջնորդեանի տուն, աչքով կ'տեսնէք թէ ինչպէս ձեր տիկինը խլում է ինձանից սիրած ամուսնուս»... (Անջը նայելով և փոքր ինչ ճառծելուց յետոյ) Հիմայ ես հասկանում եմ, որ մի երրորդը կայ, որ այսքան պղտորում է ջուրը... (Հետիմանին) Պարոն դօքտոր. միմիայն իմ ունեցած յարգանքը դէպի ձեր տարիքը և անցեալը պարք են դնում վրաս հաւատացնել ձեզ, որ այս նամակը կնոջս գրութիւնը չէ...: Ուրիշ տեղ պտուեցէք հեղինակին, որ կամեցել է ձեզ հետ խաղ խաղալ (Գլուխ պոլով նայուիլ յանձնում է Հետիմանին):

ՀԵՔԻՄ. Ի՞նչպէս, դուք համարձակվում էք ասել...

ՆԱԽԱՐ. Հանդարտ խօսացէք, մի մոռանաք որ ձեր տանը չէք...

ՀԵՔԻՄ. Կարծում էք այսպէս վերջացաւ միս... ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Ի հարկէ չը վերջացաւ... Այս նամակն էլ ձերը չէ, պ. ՀԵՔԻՄԵԱՆ (Պաշտոն է նորոն ջեկան հանուն նամակը):

ՀԵՔԻՄ. (Համապ չեռակաց առանում է և բարձր էարդում) «Այսօր $12\frac{1}{2}$ ժամին ձեր սիրելի ամուսին Նախարարեանը գաղտնի ժամադրութիւն ունէ կնոջս հետ Միջնորդեանի տանը. եթէ չէք հաւատում, հրամայեցէք, աչքով տեսէք»: (Բարձացած գյուտ է աւղանի վրայ) Ես սովորութիւն չունիս այսպիսի նամակներ գրելու:

ՆԱԽԱՐ. Բայց այս բոլորը ինչ կը նշանակէ... (Լավաց է պատճեն չայնը, ծառան անցնում է դուռը բանալու):

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. (առանձին) Այս արդէն տիկինն է, տես ինչպէս պիտի խայտաւակուի:

ՆԱԽԱՐ. (առանձին) Միթէ այս նա է. դարձեալ շփոթ պիտի բարձրանայ... ՀԵՔԻՄ. (առանձին) Անշուշտ կինս է գալիս. Տէր Աստուած դու լինձ համբերութիւն տուր:

Ե Բ Ե Ւ Ո Յ Թ IX.

ՆՈՅՆՔ և ՄԻՔՆՈՐԴԵԱՆ

ՄԻՔՆՈՐԴ. (Պահելում հնում է աղջած) Այս ինչ պատիւ է... (Ամենին չեռակ պոլով) շատ և շատ շնորհակալ եմ, բայց, ներեցէք լինդրեմ, ձեր այս այցե-

լութիւնը լոկ ինձ պատուելու համար չէ. անշուշտ մի կարևոր պատճառ կայ...

Հեթիվ. Դուք, որպէս տանտէր, աւելի լաւ պիտի իմանաք այդ պատճառը...

Միջնորդ. Ոչինչ չեմ հասկանում:

ՆԱԽԱՐ. Ահա ես բացատրեմ: Այսօր առաւօտ ես մի տիկնոջից նամակ եմ ստանում, առանց ստորագրութեան, որով ինդրում է ժամի 12-ին գալ ձեր տուն իւր հետ առանձնակի տեսնուելու համար: Ես փոքր ինչ ուշ եկայ և այստեղ ոչ ոքի չ'գտնելով՝ ուզեցի սպասել... յանկարծ եկաւ կինս...

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Ես էլ պ. չէքիմեանի կողմից մի նամակ ստացայ, որ շտապեմ գամ տեսնելու, թէ ինչպէս մարդս սիրահարութիւն է յախտնում այստեղ իւր տիկնօջը: Եկայ, բայց մարդուս մէնակ գտայ...

Հեթիվ. Տիկին նախարարեանի կողմից մի նամակ էլ ես ստացայ, որով հրաւիրում է ինձ գալ և աչքովս տեսնել թէ ինչպէս իմ կինս խլում է իրանից սիրած ամուսնոյն: Ներս վաղեցի, բայց կնոջս փոխարէն, տեսայ այստեղ պ. նախարարեանին իւր ամուսնոյ հետ:

ԵՐԵՒԱՅԹ X.

ՆՈՅՆԻ և ՏԻԿԻՆ ՄԱՀՏԵՍԵԸՆ

ՏԻԿ. ՄԱՀ. (Խոհանոսի ուսուելից ներս Առաջելով առաջայած) Հապա ե՞ս... Ասացէք, ինդրեմ, ո՞վ է

այս խաղ խաղացողը, որ համարձակվում է ինձ այսպէս ծաղրել: Նամակ եմ ստանում թէ՝ արի աչքովդ տես, որ տիկին չէքիմեանը... Ես էլ շտապեցի, 12-ից ճիշդ քառորդ անցած եկել եմ և մինչեւ հիմայ խոհանոցի գուներում պահուած սպասում եմ, թէ՝ ահա շուտով, շուտով կուգայ տիկ. չէքիմեանը... (Հէտիւննեն) ՊՌ է, ԲՆՅՈՒ չեկաւ... այսքան մարդու կարելի՞ է միթէ սպասել տալ...

ԵՐԵՒԱՅԹ XI.

ՆՈՅՆԻ և ՏԻԿԻՆ ՀԵԹԻՎԵԸՆ

ՏԻԿ. ՀԵԹԻՎ. (Խոհանոսից ուսուելով գալով, ամենեկետն հառամ էն աղջած, չետիմառը ուղարձ է վրան յարչակուելով Միջնորդեանը բանում է չեւուից) Ես այստեղ եմ. ամենից առաջ ես եկայ, ճիշդ ժամի 12-ին, ինչպէս զրել է ինձ նսխարարեանը (Ասմակը բանելով սեղանի վրա):

ՀԵԹԻՎ. Գուք, իմ կնոջս...

ՏԻԿ. ՀԵԹԻՎ. Սպասիր փոքր ինչ: Ժամի 12-ից սկսած առանձնացել եմ պ. Արշնորդեանի ննջարանը, որի համար յատուկ ներողութիւն եմ ինդրում տանտիրոջից, և այստեղից մեծ համբերութիւնը դիտում և լսում էի թէ ինչ էր պատահում այստեղ: Ես հիմայ համոզուեցի, որ ինձ նամակ գրողը պ. նախարարեանը չէ...

ՏԻԿ. ՄԱՀ. (Ետհապելով) Եթէ այստեղ էիք, ԲՆՅ

չու ուրեմն ինձ էլ չը կանչեցիք, որ միասին դիտէինք. ես խոհանոյում ճրագուի հոտից խեղդուեցի: Զեր ծառան, պ. Միջնորդեան, վլաւում դմակ շատ խառնեց, թէ չէ տեսէք, ճաշին ուտելիս ինձ կը մըտաբերէք...

ՆԱԽԱՐ. Այս բոլոր խաղերին մի վերջ պիտի լինի, թէ ոչ...

ՀԵՔԻՄ. Ոչինչ չեմ հասկանում, խելքս գլխիցս թուզում է...

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Վերջը այն պիտի լինի, որ միասին փնտրենք և գտնենք՝ թէ ով է մեր գլխին այս խաղ խաղացողը...

ՄԻՋՆՈՐ. Ես արդէն գտել եմ. ինդրեմ հրամայեցէք, շնորհ արէք ինձ հիւր լինելու և ես ամեն բան բացատրեմ... (Փոշոյել չայն է շահ-մ) «Ճարլօտ Սավելէվնայ, Ճարլօտ Սավելէվնայ»... (Թէ. Մահաւունը վրայ է փոշում, բայց առաջանանք և բայց առաջանք) «Ի՞նչ ես գոռում չալրապետ Արխիսլիչ, ամօթ չէ, ինչ ես կոռում, քիթդ սրբէ»: (Պատրաստան փոշոյեց) «Հոտ ես, ալ տուն չը մնաց, որ չը հարցունէի, Ճարլօտ Սավելէվնայ»:—(Տէ. Մահաւունը) «Ի՞նչ ես ու զում». (Պատրաստան փոշոյեց) «Ես ալ գամ» (Տէ. Մահաւունը) «Կուզես վերև արի, քիթդ սրբէ:

ՏԻԿ. ՄԱՀ. (Գոշու և առաջ նստելով) Դեռ ասողներ էլ կան, իբր թէ ես համբերութիւն չունիմ. այսպիսի մարդուն դիմանալ կը լինի, կենացս ամենահետաքրքիր բոպէներում սա միշտ ինձ խանգա-

րում է. շարունակեցէք պ. Միջնորդեան:

ՄԻՋՆՈՐ. Երկու ամիս կլինի պ. Նախարարեան ձեր այս քաղաք գալը: Երկու բժիշկ ունենալը մի տարօրինակ բան չէր մեզ համար, քանի որ առաջ էլ այստեղ երկու բժիշկ են եղել: Դուք, պատուելի դօքտորներդ, իսկոյն միմեանց այցելեցիք և գրեթէ բարեկամացաք...

ՏԻԿ. ՄԱՀ. (Ընդհատելով) Ես լաւ լիշում եմ, որ պ. Նախարարեանը սկզբում մեզ չեկաւ ացելութեան, իսկ իւր տիկնոջ հետ էլ պատահմամբ ծանօթացայ փոշմէյստրինց տանը:

ՄԻՋՆՈՐ. Չը անցաւ կարճ միջոց, ձեր յարաբերութիւնները վատացան: (Հետեւանին) Զեր տանը ես յարձակմունքներ էի լսում նոցա դէմ, (Նախարարէանին) իսկ ձեր տանը — սոցա դէմ: Երբ ես աշխատում էի ձեր մէջ խաղաղութիւն մտցնել, երկու կողմից էլ ինձ մեղադրում էիք որ ես պաշտպան եմ հակառակ կողմին: Իմ աշխատանքս ՚ի զուր էր անցնում և ես համոզվում էի, որ մի խառնակիչ կայ, որ ինձանից հզօր է...

ԵՐԵՒԱՅՑ Բ. XIII.

ՆՈՅՆԲ և ՄԱՀՏԵՍԵԸՆ

ՄԱՀ. (Նախարարէանին) Ճարլօտ Սավելէվնայ, Ճարլօտ Սավելէվնայ (Կեր և գոշի):

ՏԻԿ. ՄԱՀ. Ահա այսպէս միշտ կեանքիս հետաքրքիր բոպէներում սա ինձ արգելք է լինում: Նոր չեմ փորձել: Արի, արի մօտս նստիր, քիթդ սրբէ...

ՄԱՀ. Ես ոչինչ...

ՏԻԿ. ՄԱՀ. (Երգիծաբար) Դու միշտ «ոչինչ», քիթդ սրբէ: (Միջնորդեանէն) շարունակեցէք:

ՄԻՋՆՈՐԴԻ. Այդ խառնակիչ բարի մարդը հաշուել է, որ մինչեւ ճաշը սովորաբար ես տանը չեմ լինում և բնակարանս ազատ լինելով այդ միջոցին, յարմարութիւն ունի այսպիսի զուարճալի խաղերի համար: Ամէնքիդ այստեղ հրաւիրողը միւնոյն բարի մարդն է: Եթէ դուք տիկին չէքիմեան և պարոն Նախարարեան, ճշգութեամբ նշանակած ժամանակին գայիք, դուք, ՚ի հարկէ, պիտի բացատրութիւն պահանջիք միմիանցից ձեր այս ստացած հրաւէրքների մասին: Այդ տարակուսանքի ժամանակ միմիանց ետևեց և որոշած բոպէներին պիտի հասնէլք վկաներդ՝ (յոյց պարզ ակին նախարարեանի, ակին Պահպատանի և բժ. չէտէմեանի վրա): Անկարելի է որ այստեղ մի աղմուկ և վէճ չբացուէր, որ, ՚ի հարկէ, առանց հետևանքի չէր անցնիլ և մեր յարգելի դօքտորներից դուցէ մէկնու մէկը այլ ևս չկամենար մնալ այս քաղաքում... Նորա ցանկացածն էլ այդ էր:

ՏԻԿ. ՆԱԽԱՐ. Բայց ով է այդ բարի մարդը:

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Էլ ինչու էք ծածկում անունը. այդ միայն Սիրեկան Աղան կարող է լինել. գոնէ մեզ յալտարարութիւններ զրել տուողը նա էր...

ՆԱԽԱՐ. Լրագրի մէջ թղթակցութիւն տպել տուողն էլ նա էր...

ՀԵՔԻՄ. Միթէ Սիրեկան Աղան ընդունակ է այդպիսի չարութեան:

ՏԻԿ. ՄԱՀ. Ի՞նչ կայ զարմանալու, մեր ամուսնութեան պատճառն էլ նա չեղաւ. միտդ է հայրապետ Սրիսիալիչ:

ՄԱՀ. Մեր խաչեղբարն էր...

ՏԻԿ ՄԱՀ. (Ռուսական) Քո ընտրածն է. ես այն ժամանակ շատ ջահիլ էի, քիթդ սրբէ: (Լովում է շահում զայնը).

ՄԻՋՆՈՐԴԻ. Սիրեկան Աղան ամենայն ինչ հաշուած է ունեցել, բայց վերջի վերջու նորա հաշիները սխալ դուրս եկան... ահա և ինքը:

ԵՐԵՒԱՅԹ XIII.

ՆՈՅՆԻ և ՍԻՐԵԿԱՆ ԱՂԱՅ

ՍԻՐԵԿ. Բայց, բոլոր բարեկամներս ալ հոս են. աս ինչ սիրուն ընկերութիւն է... (Տապէնում է ակենչ չէտէմեանին) Անսա Գավրիլօվնայ, իմ աչքի լնիս (Ռուսում է յետէլ պաշէլ):

ՏԻԿ. ՀԵՔԻՄ. Թողէք (առանց յետէ պարու, ուշւշւում է մէ հողմը):

ՍԻՐԵԿ. Ելէնայ Պաւլօվնայ, իմ հրեշտակս (ռուսում է յետէլ պաշէլ):

Տիկ. ՆԱԽՈՒ. Հեռացէք ինձանից (հաշվում է մեռ
իրավունք):

Սիրեկ. Ճարլօտ Սակել...:

Տիկ. ՄԱՀ. Ես ձեր խաղալիքը չեմ. կէս ժամ
աւել խոհանոցում ճրագուի հոտից խեղդուեցի:

Սիրեկ. (Շարժայած) Ի՞նչ պատահեր է աղաներու.
րան մը կայ, բաէք ես ալ տխրիմ...

ՀԵԲԻՄ. (Համարական) Ի՞նչ յանդութիւն: (Անտեսանքն)
Յանկալի է զիտենալ, ձեզ այստեղ հրաւիրողը
ով էր:

ՄԻՋՆՈՐԴ. (Ըստհանելով) Հրաւիրողը ես էի. (Անտեսանքն)
Այսօր առաւօտ, Սիրեկան Ազայ, ձեր եղբօր
որդուց նամակ ստացաւ:

Սիրեկ. Գրիգորը զբեր է, հապա չես ասեր...

ՄԻՋՆՈՐԴ. Եկայ ձեզ մօտ բովանդակութիւնը
հաղորդելու, բայց ձեզ տանը չգտնելով, խնդրեցի որ
ինքներդ շնորհ բերէք ինձ մօտ կարգալու...

Սիրեկ. Գրիգորը ի՞նչ զբեր է, շուտ կուգայ...

ՄԻՋՆՈՐԴ. Գրիգորը գրում է, որ աւարտելով իւր
ուսումը, նա բժշկութեան պաշտօնով հրաւիրուել է
Մոսկայի մօտ գտնուող մի գործարանում շատ ձեռն-
տու պայմաններով և երեք տարի ժամանակաւ...

Սիրեկ. (Շարժայած) Ի՞նչ կըսես, Գրիգորը...

ՄԻՋՆՈՐԴ. Նա ինդրում է ինձ համոզեմ ձեզ,
որ այլ ես չը պնդէք, որ նա շուտով վերադառնայ,
ու թողնէք ձեր այն զիտաւորութիւնը, որ ինչպէս
իւրեան նկարագրել էք, ցանկանում էք եղել նորա

Համար տեղ բանալ տեղւոյս բժշկներից մէկնումէկին
հեռացնելով... Ահա և նամակը (պաշտ է Սիրեկանի):

Սիրեկ. (անցացնելով գնելով և ուշուշողով հունչ
իւրաբեռ է, ժամանակ ժամանակ բայց անչեղանակով) Վայ, անի-
րու, վայ... ինձի կենդանի թաղեց... ես անոր ող-
տին կաշխատիմ... ան...

ՆԱԽՈՒ. Հիմա ամենայն ինչ պարզ է...

ՀԵԲԻՄ. Կը վայելէր միթէ ձեր անձնական հա-
շիւների համար այսքան մարդուս խաղալիք շինել
և խալտառակել. ամօթ չէ, Սիրեկան Աղաւ:

Տիկ. ՀԵԲԻՄ. Դուք մեր տանու բարեկամն էիք
համարվում:

Տիկ. ՆԱԽՈՒ. Ես ձեզ հօր տեղ էի ընդու-
նում:

Սիրեկ. Ալ, աղաչեմ, գագարեցէք. ամէն նախա-
տանաց արժանի եմ: 65 տարեկան եղայ, կեանքիս
մէջ ասանկ Սիսալ Հայիւ բռնած չունէի: Խալտա-
ռակուեցի, պրծաւ: Արդարանալիք չունիմ: Եզրպոսի
ծեր աղուէսին պէս լարած թակարդիս մէջ ինքս ըն-
կայ: Շշմարիտ է եղեր թէ՝ ինչ որ ընես՝ զայն կը
դունես... Ալ բաւական է... Մնացէք բարեւ... (Դարձ
է գնաւու):


ԵՐԵՒՅՑ Թ Խ I V.

ՆՈՅՆԻ, առանց ՍԻՐԵԿԱՆ ԱՂՋԻ

ՄԻՔՆՈՐԻ. Իրաւ, որ այսքանը բաւական էր:
 Մենք էլ վերջ տանք բոլոր անհամութեանցը և ո-
 րովհետև իմ փոքրիկ տնակը առաջին անգամն է որ
 բաղդ ունի ձեզ պէս թանկադին հիւրեր ունենա-
 լու, այդ պատճառաւ, աղաջում եմ, պատիւ արէք
 իմ աղքատիկ ճաշը վայելելու և նորահաստատ խա-
 ղաղութիւնը միասին տօնելու. ասած է՝ «աղ ու
 հաց, սիրավ բաց»:

ՏԻԿ. ՄԱՀ. Բայց ձեր ծառան փլաւի մէջ դժակ
 շատ խառնեց, աչքովս տեսալ...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ .



Վ Ե Ր Զ

Թիֆլիզում «ԱԽԱԼ ՀԱՇԻՒ» կոմեղիան առա-
 ջին անգամ՝ ներկայացրեց Հայ ղերասանական
 մշտական խոսմը 1891 թուի դեկտեմբերի 26-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍՈԼՈՄՈՆ ՍՏԵՓԱՆԻՉ ՃԵԲԻՄԵՍՆ	, բժ. Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԱՆՆԱ ԳԱՎՐԻԼՈՎՆԱՅ	, սորա կինը S. ԶԱԲԵԼ
ՆԻԿՈԼԱՅ ԻՒՍԱՆԻՉ ՆԱԽԱՐԱՐԵԱՆ	, բժ. . Պ. ԱԲԵԼԵԱՆ
ԵԼԵՆԱՅ ՊԱԿԼՈՎՆԱՅ (ՀԵՂԻՆԻ), սորա կինը S. ՄԵԼԻՔԵԱՆ	
ՀԱՅՐԱՊԵՏ ԱՐԽԻՊԵԴ ՄԱՀՏԵՍԵԱՆ	. . Պ. ՎՐՈՅՐ
ՃԱՐՈՏԱՅ ՍԱՎԵԼԵՎՆԱՅ (ՃԱՐՈՅ-ՆԵՐԵՆԻ)	
սորա կինը	ՕՐ. ՎԱՐԴՈՒԿԻ
ՍԻՐԵԿԱՆ ԱՂՋՅ Պ. ՏԵՐ-ԳԱԽԹԵԱՆ
ՄԻՔՆՈՐԻԹԵԱՆ Պ. ԱՂՅՅԵԱՆ
ՍԱՎՄՈՍԵԱՆ Պ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՊԱՐԶԱՄՏԵԱՆ Պ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ՄԱՐԻԱՄ ՕՐ. Ն. Ն.
ՍԵՐՈՅ, Խոհաբար (ՇՀԱ) Պ. ԹՈՒՐԵԱՆ
ՄԱԹՈՍ Պ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ներկայացման իրաւունք ստանալու համար
դիմում է այս հասցեով

ТИФЛИСЪ

Александру Ерицову, Анчискатская ул., домъ № 3.

9068

2013

